

ՀԱՄԿ(Բ)Կ


ԾՐԱԳԻՐԸ ՑԵՎ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

}

ԱՅԿՈՒՍՉՐԱՏ • 1936

Հեռութեարմեն բոլոր յերկիրների, միացե՞ք

ՅԱՄԿ(Բ)Կ
ԾՐԱԳԻՐԸ ՑԵՎ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ



ԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԿՑԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ. 1936

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Համամիութենական կոմունիստական (բոլցնիկների) կուսակցության ծրագրի ու կանոնադրության այս հրատարակությունը բովանդակում է, անփոփոխ կերպով, կուսակցության ծրագրի տեքստը՝ ընդունված կուսակցության VIII համագումարի կողմից, և կուսակցության կանոնադրության տեքստը՝ ընդունված կուսակցության XVII համագումարի կողմից: (Ծրագրի տեքստում թեկ անունը փոխարինված է Համկովկամ, համաձայն XIV համագումարի վորոշման՝ կուսակցության անվանումը փոխելու մասին):

Կ 682 - Շ Գ Հ



ПРОГРАММА И УСТАВ ВКП (б)

Армпартизат, Ереванъ

ՀԱՄԱՍԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
(ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐԸ

ԸՆԴՈՒՆՎԱԾ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ VIII
ՀԱՍՏՈՒՄԱՐՈՒՄ

(1919 թվի մարտի 18—23)

1917թվի նոյեմբերի 7-ի (Հոկտեմբերի
25-ի) Հոկտեմբերյան հեղափոխությունը
Բուսաստանում իրագործեց պրոլետարիատի
դիկտուրան. չքաղորադույն դյուլացիու-
թյան կամ կիսասլորուետարիատի աջակցու-
թյամբ պրոլետարիատն սկսեց կոմունիստա-
կան հասարակության հիմքը կառուցել: Հե-
ղափոխության զարգացման ընթացքը Գեր-
մանիայում և Ավստրո-Հունգարիայում,
պրոլետարիատի հեղափոխական շարժման
աճումը բոլոր առաջավոր յերկիրներում,
այդ շարժման խորհրդային ձևի տարածու-
մը, այսինքն այնպիսի ձևի, վոր տանում և
դեպի պրոլետարիատի դիկտուրայի ուղ-
ղակի իրագործումը,—այս ամենը ցույց
տվեց, վոր սկսվել է համաշխարհային պրո-
լետարտկան կոմունիստական հեղափոխու-
թյան դարաշրջանը:

Այդ հեղափոխությունն անխուսափելի ար-

դյունք եր կապիտալիզմի զարգացման, վորը (կապիտալիզմը) գեռևս տիրապետում է քաղաքակիրթ յերկրների մեծ մասում: Կապիտալիզմի և բուրժուական հասարակության եյությունը մեր հին ծրագիրը ճշտուրն, յեթե չհաշվենք կուսակցության՝ սոցիալ-դեմոկրատական վոչ ճիշտ անունը, բնորոշել ե հետեւյալ դրույթներով.

«Այդպիսի հասարակության գլխավոր հատկանիշը ապրանքային արտադրությունն ե, վոր հիմնված ե կապիտալիստական արտադրական հարարերությունների վրա, վորոնց առկայության դեպքում արտադրության միջոցների և ասլրանքների շրջանառության ամենից կարեռ և նշանակալի մասը պատկանում է քանակով փոքրաթիվ մի դասակարգի անձերի, մինչդեռ բնակչության իունը մեծամասնությունը կազմում են պրոլետարները և կիսապրոլետարները, վորոնք իրենց տնտեսական գրությամբ ստիպված են շարունակ կամ պարբերաբար վաճառել իրենց աշխատանքային ուժը, այսինքն կապիտալիստների վարձկանը դառ-

նալ, և իրենց աշխատանքով հասարակության բարձր դասակարգերի յեկամուտն ստեղծել:

«Կապիտալիստական արտադրական հարաբերությունների տիրապետման շրջանն ավելի ու ավելի յե ընդլայնվում, վորչափ վոր տեխնիկայի մշտական կատարելագործում՝ մեծացնելով խոշոր ձեռնարկությունների տնտեսական նշանակությունը, դուրս և մղում մանր ինքնուրույն արտադրողներին, նրանց մի մասին պրոլետարդարձնելով, մնացածների դերը սահմանափակելով հասարակական-տնտեսական կյանքում և տեղ-տեղ նրանց քիչ թե շատ լիակատար, քիչ թե շատ բացահայտ, քիչ թե շատ ծանր կախման մեջ զնելով կապիտալիզմ:

«Բացի այդ՝ նույն տեխնիկական պրոդրեսը հնարավորություն ե տալիս ձեռնարկատերին ավելի մեծ չափով կիրառել կանանց և յերեխաների աշխատանքն ապրանքների արտադրության և շրջանառության պրոցեսում: Խակ վորովհետեւ, մյուս կողմից, այդ պրոդրեսը հարարերականորեն

պակասեցնում և ձեռնարկատերերի կարիքը
աշխատանքային կենդանի ուժի նկատմամբ,
ուստի բանվորների ուժի պահանջն անհրա-
ժեշտաբար հետ և մնում նրա առաջարկից,
դրա հետեանքով մեծանում և վարձու աշ-
խատանքի կախումը կապիտալից և բարձ-
րանում նրա շահագործման աստիճանը:

«Այսպիսի դրությունը բուրժուական յեր-
կիրների ներսում և նրանց մշտապես սրվող
փոխազդ մրցակցությունը համաշխար-
հային չուկայում ավելի ու ավելի յեն դըժ-
վարացնում միշտ աճող քանակությամբ
արտադրվող ապրանքների վաճառահանու-
թյունը: Գերարտադրությունը,—վոր յերե-
վան և զալիս քիչ թե շատ սուր արդյունա-
բերական ճգնաժամերի մեջ, վորոնց հետե-
վում են արդյունաբերության լճացման քիչ
թե շատ տեսական շրջաններ, —բուրժուական
հասարակության արտադրողական ուժերի
զարգացման անխօսավելի հետեանքն ե:
Ճգնաժամերը և արդյունաբերության
լճացման շրջաններն իրենց հերթին ավելի
և քայլայում են մանր արտադրողներին,

ավելի ևս մեծացնում են վարձու աշխա-
տանքի կախումը կապիտալից, ավելի ևս
արագացնում են բանվոր դասակարգի դրու-
թյան հարաբերական, իսկ յերեմն ել բա-
ցարձակ վատթարացման ընթացքը:

«Այսպիսով տեխնիկայի կատարելագոր-
ծումը, վորը նշանակում և աշխատանքի
արտադրողականության ավելացում ու հա-
սարակական հարստության աճում, բուր-
ժուական հասարակության մեջ պայմանա-
վորում և հասարակական անհավասարու-
թյան աճումը, ունեորների և չունեորների
միջև յեղած տարածության մեծացումը՝ աշ-
խատավոր մասսաների ել ավելի լայն խա-
վերի համար ապրուստի անապահովության,
անդորրության ու բազմատեսակ զրկանք-
ների աճումը:

«Բայց բուրժուական հասարակությանը
հատուկ այս բոլոր հակասությունների ա-
ճումին ու զարգացմանը համաչափ աճում
և նաև աշխատավոր և շահագործվող մաս-
սայի դժգոհությունը դոյություն ունեցող
կարգերից, աճում և պրոլետարների թիվն

ու համախմբվածությունը և սրվում ե նը-
րանց պայքարն իրենց շահագործողների դեմ :
Միենույն ժամանակ տեխնիկայի կատարե-
լագործումը, համակենաբույնացնելով արտա-
դրության և շրջանառության միջոցները և
հանրայնացնելով աշխատանքի պրոցեսը կա-
պիտականական ձեռնարկություններում,
ավելի ու ավելի արագ նյութական հնարա-
վորություն և ստեղծում կապիտականա-
արտադրական հարաբերությունները կոմու-
նիստականներով փոխարինելու համար, այ-
սինքն՝ այն սոցիալական հեղափոխության
համար, վորը միջազգային կոմունիստական
կուսակցության՝ վորպես դասակարգային
շարժման գիտակից արտահայտչի՝ ամբողջ
գործունեյության վերջնական նպատակն ե
կազմում :

«Փոխարինելով արտադրության և շրջա-
նառության միջոցների մասնավոր սեփակա-
նությունը հասարակականով և հասարակա-
կան-արտադրողական պրոցեսի պլանաչափ
կազմակերպություն մտցնելով՝ հասարա-
կության բոլոր անդամների բարեկեցու-

թյունն ու բաղմակողմանի զարգացումն ա-
պահովելու համար՝ պրոլետարիատի սո-
ցիալական հեղափոխությունը կվոչնչացնի
հասարակության բաժանումը դասակարգե-
րի և գրանով կաղատագրի ճնշված-ամբողջ
մարդկությունը, քանի վոր վերջ կդնի հա-
սարակության մի մասը մյուսի կողմից շա-
հագործելու բոլոր ձևերին :

«Սոցիալական այս հեղափոխության ան-
հրաժեշտ պայմանը պրոլետարիատի դիկ-
տատուրան ե, այսինքն՝ պրոլետարիատի
կողմից մի այնպիսի քաղաքական իշխանու-
թյուն նվաճելը, վորը նրան հնարավորու-
թյուն տա ճնշելու շահագործողների ամեն
մի դիմաբլություն։ Նպատակ ունենալով
ընդունակ դարձնել պրոլետարիատին իրա-
գործելու իր պատմական մեծ միսիան, մի-
ջազդային կոմունիստական կուսակցությու-
նը կազմակերպում և նրան վորպես ըուլոր
բուրժուական կուսակցություններին հակա-
դիր ինքնուրույն քաղաքական կուսակցու-
թյուն, ղեկավարում և նրա դասակարգային
պայքարի բոլոր արտահայտությունները,

Նրա առջև մերկացնում շահագործողների և
շահագործվողների շահերի անհաշտ հակա-
դրությունը և պարզաբանում ե նրան առա-
ջիկա սոցիալական հեղափոխության պատ-
մական նշանակությունն ու անհրաժեշտ
պայմանները։ Դրա հետ միասին՝ նա մնա-
ցած աշխատավոր և շահագործվող ամբողջ
մասսայի առջև յերևան և հանում նրա
դրության անհօւսավիճությունը կապիտալիս-
տական հասարակության մեջ և սոցիալա-
կան հեղափոխության անհրաժեշտու-
թյունը հանուն նրա սեփական արատազրման
կապիտալի ճնշումից։ Բանվոր գասակարդի
կուսակցությունը՝ կոմունիստական կու-
սակցությունը դեպի իր շարքերն և կոչում
աշխատավոր և շահագործվող բնակչության
բոլոր խավերին, վորչափով նրանք պրոլե-
տարիատի տեսակետին են անցնում»։

Կապիտալի համակենտրոնացման (կոնցեն-
տրացիայի) և կենտրոնացման պրոցեսը,
վոչնչացնելով աղատ մրցակցությունը, XX
դարի սկզբին առաջ բերեց կապիտալիստ-
ների հզոր մենաշնորհային միություններ՝

սինդիկատներ, կարտելներ, արեստներ, վո-
րոնք վճռական նշանակություն ստացան
ամբողջ տնտեսական կյանքում, առաջ բե-
րեց բանկային կապիտալի և ահագին չա-
փերով համակենտրոնացած արդյունաբե-
րական կապիտալի միաձուլում և կապիտա-
լի ուժեղ արատահանում դեպի ոտար յերկիր-
ներ։ Տրեստները՝ շնորհրկելով կապիտալիս-
տական պետությունների ամբողջ խմբեր,
սկսեցին տնտեսական վերաբաժանման յին-
թարկել աշխարհը, վորն ամենահարուստ
յերկիրների միջև տերիտորիալ կերպով ար-
դեն խոկ բաժանված եր։ Ֆինանսական կա-
պիտալի այդ դարաշրջանը, վոր անխուսա-
վելի կերպով սրում և պայքարը կապիտա-
լիստական պետությունների միջև, իմպե-
րիալիզմի դարաշրջանն ե։

Այստեղից անխուսափելիորեն բղխում են
իմպերիալիստական պատերազմներ, պատե-
րազմներ՝ վաճառահանման չուկաների, կա-
պիտալի գործադրության շրջանների, հու-
մույթի և բանվորական ուժի համար, այ-
սինքն համաշխարհային տիրապետության

և մանր ու թույլ ժողովուրդների վրա իշխելու համար։ Հենց այլպիսի բնույթը ունի 1914—1918 թ. թ. առաջին մեծ իմպերիալիստական պատերազմը։

Յե՛շամաշխարհային կապիտալիզմի դարդացման չափաղանց բարձր աստիճանն ընդհանրապես, և՝ ազատ մքցակցության վոխարինումը պետական մենաչնորհային կապիտալիզմով, և՝ արդյունքների արտադրության ու բաշխման պրոցեսի հասարակական կարգավորման ապարատ պատրաստելը բանկերի, ինչպես նաև կապիտալիստների միությունների միջոցով, և՝ կապիտալիստական մենաչնորհների աճման հետ կապված՝ թանգության ու սինդիկատների գործադրած ձնչման աճումը բանվոր դասակարգի վրա, սրա ստրկացումն իմպերիալիստական պետության կողմից, պրոլետարիատի տնտեսական ու քաղաքական պայքարի ահագին դժվարացումը, և՝ իմպերիալիստական պատերազմից առաջացող սրբափները, արհավիրքներն ու ավերածությունները, — այս ամենն անխուսափելի յեն դարձբել կապիտա-

լիզմի կործանումն ու հասարակական տընտեսության ավելի բարձր տիպին անցնելը։

Իմպերիալիստական պատերազմը չեր կարող վերջանալ վոչ միայն արդարացի հաշտությամբ, այլև ընդհանրապես նրանով, վոր բուրժուական կառավարությունները քիչ թե շատ կայուն հաշտություն կնքեն։ Կապիտալիզմի դարգացման՝ հասած աստիճանի վրա պատերազմն անխուսափելիորեն վերածվել և մեր աչքի առաջ վերածվում է շահագործվող աշխատավոր մասսաների, նրանց զլուխն անցած պրոլետարիատի քաղաքացիական պատերազմի՝ ընդեմ բուրժուազիայի։

Պրոլետարիատի աճող գրոհը և մանավանդ նրա հաղթություններն առանձին յերկիրներում՝ ուժեղացնում են շահագործողների դիմադրությունը և առաջ են բերում կապիտալիստների միջազգային միավորման նոր ձեեր (Ազգերի միզա և այլն), վորոնք համաշխարհային մասշտաբով կազմակերպելով յերկրագնդի բոլոր ժողովուրդների սիստեմատիկ շահագործումը, առաջին հերթին



իրենց ջանքերն ուղղում են անմիջականորեն
ճնշելու բոլոր յերկրների պրոլետարիատի
հեղափոխական շարժումները:

Այս ամենը անխուսափելիորեն զուգոր-
դում են առանձին պետությունների ներ-
սում մղվող քաղաքացիական կրիվը այն
հեղափոխական պատերազմների հետ, վոր
մղում են թե պաշտպանվող պրոլետարական
յերկրները և թե ճնշող ժողովուրդները՝
իմպերիալիստական ոլետությունների լծի
դեմ:

Այս պայմաններում պացիֆիզմի, կա-
պիտավորմի որով միջազգային զինաթափ-
ման, միջնորդ գաստարանների և նման լո-
գումները վոչ միայն հետադիմական ուսու-
պիսաներ են, այլև աշխատավորներին ուղ-
ղակի խարելու միջոց, վորի նպատակն ե
զինաթափել պրոլետարիատին և նրան հեռու
պահել շահագործողներին զինաթափելու
խնդրից:

Միայն պրոլետարական կոմունիստական
հեղափոխությունը կարող է հանել մարդ-
կությունն իմպերիալիզմի և իմպերիալիս-

տական պատերազմների ստեղծած միակու-
ղուց: Ինչպես ել վոր վիճակության դժվարությունները և նրա հնարավոր
ժամանակավոր անհաջողությունները կամ
հակահեղափոխական ալիքները, —պրոլետա-
րիատի վերջնական հաղթանակն անխուսա-
փելի յե:

Համաշխարհային պրոլետարական հեղա-
փոխության այդ հաղթանակը պահանջում է
պոաջակոր յերկիրների բանվոր դասակարգի
վակատար վստահությունը, ամենասերտ
յեղայրական միություն և հեղափոխական
գործողությունների ըստ կարելույն առաջել
միանականություն:

Այս պայմաններն անիրագործելի յեն,
յեթե սկզբունքորեն վճառկանապես չխղվեն:
կապերը սոցիալիզմի բուրժուական խեղա-
թյուրման հետ և անխնա պայքար չմղվի
այդ խեղաթյուրման դեմ, վոր հաղթանակել
և պաշտոնական սոցիալ-դեմոկրատական և
սոցիալիստական կուսակցությունների վեր-
նախավերում:

Այսպիսի խեղաթյուրում և մի կողմից

սպորտունիզմի և սոցիալ-շովինիզմի՝ խոս-
քով սոցիալիզմի, գործով՝ շովինիզմի հո-
սանքը, սեփական աղջային բուրժուազիայի
թալանչիական շահերի պաշտպանությունը
հայրենիքի պաշտպանության կեղծ լողուն-
գով քողարկելն ինչպես առհասարակ, այն-
պես ել հատկապես 1914—1918 թ. թ. իմակե-
րիալիստական պատերազմի ժամանակ։ Այս
հոսանքն ստեղծվել է չնորհիլ նրա, վոր ա-
ռաջավոր կապիտալիստական պետություն-
ները կողոպտելով գաղութային և թույլ
ժողովուրդներին՝ հնարավորություն են տա-
լիս բուրժուազիային այդ կողոպտառով ձեռք
բերված գերշահույթի հաշվին արտոնյալ
վիճակի մեջ դնել և դրանով կաշուել պրո-
լետարիատի վերնախավերին, խաղաղ ժա-
մանակում արահովել նրանց մի տանելի
քաղքենիական գոյություն և իր մոտ ծա-
ռայության վերցնել այդ խավերի դեկտ-
վարներին։ Ուղորտունիստներն ու սոցիալ-
շովինիստները, լինելով բուրժուազիայի
ծառաներ, պրոլետարիատի ուղղակի դա-
սակարգային թշնամիներն են, մանավանդ

այժմ, յերբ նրանք կապիտալիստների հետ
դաշնակցած, զինված ձեռքով ձնշում են
պրոլետարիատի հեղափոխական շարժումն
ինչպես իրենց, նույնպես և ոտար յերկիր-
ներում։

Մյուս կողմից՝ սոցիալիզմի բուրժուական
խեղաթյուրում և հավասարապես բոլոր կա-
պիտալիստական յերկիրներում նկատվող
«կենտրոնի» հոսանքը, վորը տատանվում
և սոցիալ-շովինիստների և կոմունիստների
միջև, պաշտպանելով միասնականություն
առաջինների հետ և փորձելով վերականգնել
սնանկացած լինտերնացիոնալը։ Պրոլետա-
րիատի պայքարի զեկավարը՝ նրա աղատա-
գրության համար՝ հանդիսանում է միայն
նոր լին կոմունիստական ինտերնացիոնալը,
վորի ջոկատներից մեկն և Համկերը։ Այս
ինտերնացիոնալը փաստորեն ստեղծվել է
նախկին սոցիալիստական կուսակցություն-
ների խկապես պրոլետարական տարրերից
մի շարք յերկիրներում, մանավանդ Գերմա-
նիայում, կոմունիստական կուսակցություն-
ների առաջացումով, իսկ ձևականորեն

Հիմնվել ե իր առաջին համագումարում՝ 1919 թվի մարտին, Մոսկվայում։ Կոմունիստական խնտերնացիոնալը, վորը բոլոր յերկրոների պրոլետարական մասսաների մեջ ավելի ու ավելի համակրանք ե ձեռք բերում, վոչ միայն իր անվանումով ե վերադառնում զեղի մարքսիզմ, այլև իր ամբողջ գաղափարական-քաղաքական բոլանդակությամբ, իր բոլոր գործողություններով իրագործում ե Մարքսի հեղափոխական ուսմունքը՝ մաքըրված բուրժուական-ոպորտունիստական խեղաթյուրումներից։

Զարգացնելով պրոլետարական դիկտատուրայի կոնկրետ խնդիրները Ռուսաստանի վերաբերմամբ, վորի դվասպոր հատկանիշը բնակչության մանր-բուրժուական խավերի թվական գերազանցությունն ե, Համբկը հետեւյալ կերպով ե վորոշում այդ նպատակները։

ԸՆԴԱՌՈՒՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԽԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Բուրժուական հանրապետությունը, նույնիսկ ամենազեմոկրատականը, վորը

սրբագործվում է համաժողովրդական, համազգային կամ արտադասակարգային կամքի լողունկներով, իրականում անխուսափելիութեն բուրժուազիայի դիկտատուրա յեր մնում, աշխատավորների ահաղին մեծամասնությունը մի բուռ կապիտալիստների կողմից շահագործող և ճնշող մի մեքենա՝ չնորհիվ այն բանի, վոր գոյություն ուներ հողի և արտադրության այլ միջոցների մասնավոր սեփականություն։ Դրան հակառակ, պրոլետարական կամ խորհրդային դեմոկրատիան ամբողջ պետական ապարատի, տեղական և կենտրոնական, վարչոց-վեր, մշտական և միակ հիմքը դարձեց հենց կապիտալիզմից ճնշված դասակարգերի, պրոլետարների և չքավորագույն գյուղացիների—կիսապրոլետարների, այսինքն բնակչության ահաղին մեծամասնության մասսայական կազմակերպությունները։ Դրանով իսկ Խորհրդային պետությունն իրագործեց, իմիջի այլոց, անհամեմատ ավելի լայն չափով, քան վորեւ այլ տեղ, տեղական և մարդային ինքնաշխարությունը, առանց

վերևից նշանակվող վորեւե իշխանության :
Կուսակցության խնդիրն ե անդուլ աշխատանքով իսկապես լիովին կենսագործել գեմոկրատիզմի այդ գերագույն տիպը , վորն իր կանոնավոր գործառնության համար մասսաների կուլտուրականության , կազմակերպվածության և ինքնազործունեյության մակարդակի մշտական բարձրացում ե պահանջում :

2. Հակառակ բուրժուական դեմոկրատիայի , վոր թագնում ե բուրժուակայի պետության դասակարգային բնույթը , Խորհրդային իշխանությունը բացորչ կերպով լնդունում ե ամեն մի պետության անխուսափելի դասակարգային բնույթը , քանի բուրյովին չի չքացել հասարակության բաժանումը դասակարգերի և դրա հետ միասին՝ ամեն մի պետական իշխանություն : Խորհրդային պետությունը , իր իսկ եյությամբ , նպատակ ե դնում ճնշել շահագործողների դիմագրությունը , և Խորհրդային սահմանադրությունը կանգ չի առնում շահագործողներին քաղաքական իրավումքներից պր-

կելու առաջ՝ յելակես ունենալով այն , վոր ամեն մի ազատություն խարեյություն ե , յեթե հակասում ե կապիտալի ճնշումից աշխատանքի աղատադրման : Անշեղ զլուխ բերելով շահագործողների դիմագրության ճնշումը և գաղափարականորեն պայքարելով բուրժուական իրավումքների ու ազատությունների բացարձակ բնույթի վերաբերմամբ խորապես արմատացած նախապաշարումների գեմ՝ միաժամանակ պրոետարիատի կուսակցության խնդիրն ե պարզաբանել , վոր քաղաքական իրավումքներից զբկելն ու ազատության ինչպիսի սահմանափակում ել վոր վնի , դրանք անհրաժեշտ են բացառապես վորպես պայքարի ժամանակավոր միջոցներ՝ շահագործողների ճեռնարկած փորձերի դեմ՝ պաշտպանելու կամ վերականգնելու իրենց արտոնությունները : Այնքան , վորքան կվերանա մարդը մարդու միջոցով շահագործելու որյեկտիվ հնարավորությունը , կվերանա նաև այդ ժամանակավոր միջոցների անհրաժեշտությունը , և կուսակ-

ցությունը կծդտի դրանք սահմանափակել և
լիովին վերացնել:

3. Բուրժուական դեմոկրատիան սահմա-
նափակվում էր ձեւականորեն տարածելով
հայլասարապես բոլոր քաղաքացիների վրա
քաղաքական իրավունքները և ազատություն-
ները, ինչպիսիք են ժողովների, միություն-
ների, մամուլի իրավունքները: Բայց իրա-
կանում բուրժուական դեմոկրատիայի ժա-
մանակ ինչպիս վարչական պրակտիկան,
այնպես ել գլխավորապես աշխատավորների
տնտեսական ստրկությունը, վերջիններիս
միշտ դնում եյին այդ իրավունքներով ու
ազատություններով քիչ թե շատ լայն կեր-
պով ողտվելու անհնարին դրության մեջ:

Ընդհակառակը, պրոլետարական դեմո-
կրատիան իրավունքները և ազատություն-
ները ձեւականորեն հռչակելու փոխարեն
դրանք փաստորեն տրամադրում ե ամենից
առաջ և ամենից շատ բնակչության հենց
այն դասակարգերին, վորոնք ճնշվում եյին
կապիտալիզմից, այսինքն՝ պրոլետարիատին
և գյուղացիությանը: Դրա համար Խորհրդ-

դային իշխանությունը խլում ե բուրժուա-
զիայից շնորհյուններ, տպարաններ, թղթի
պահեստներ և այլն՝ դնելով դրանք աշխա-
տավորների ու նրանց կազմակերպություն-
ների լիակատար տնօրինության տակ:

Համեմ խնդիրն այն ե, վոր աշխատա-
վոր բնակչության ե'լ ավելի լայն մասսաներ
ներգրավի դեմոկրատական իրավունքներից
և ազատություններից ուղղվելու համար և
շնորհայնի դրա նյութական հնարավորու-
թյունը:

4. Բուրժուական դեմոկրատիան դարերի
ընթացքում ազգաբարեկ և մարդկանց իրա-
վահայտարություն՝ անկախ սեռից, կրո-
նից, ցեղից և ազգությունից, բայց կապի-
տալիզմը վոչ մի տեղ թույլ չի տվել իրա-
պես իրադրծելու այդ իրավահայտարու-
թյունը, իսկ իր խմբերիսավական ստա-
դիայում չափազանց սրել ե ցեղային և ազ-
գային ճնշումը: Միայն չնորհիվ նրա, վոր
Խորհրդային իշխանությունն աշխատավոր-
ների իշխանություն ե, նա կարողացավ մին-
չև վերջը և կյանքի բոլոր ասպարեզնե-

բում, առաջին անգամ աշխարհում, անցկացնել այդ իրավահայասարությունը, կիպ մինչև կնող անհավասարության վերջին հետքերի վոչնչացումն ամուսնական և առհասարակ ընտանեկան իրավունքի ասպարեզում: Ներկա մոմենտում կուսակցության խնդիրն ե գերազանցալես գաղափարական և գաստիւրակչական աշխատանք կատարել՝ նախկին անհավասարության ու նախապահանդառմների բոլոր հետքերը միանդամայն վոչնչացնելու համար, մանավանդ պրոլետարիատի և գյուղացիության հետամնացիալիքի մեջ:

Չսահմանափակվելով կանաց ձևական իրավահայափառությամբ՝ կուսակցությունը ձգտում է նրանց ազատել հնացած տնային տնտեսության նյութական ծանրությունից՝ փոխարինելով այդ տնտեսությունը կոմունա-առներով, հասարակական ճաշարաններով, կենտրոնական լվացքատներով, մոռւներով և այլն:

5. Անհամեմատ ավելի մեծ հնարավորություն ընձեռելով աշխատավորական մաս-

սաներին, քան բուրժուական դեմոկրատիայի և պառլամենտարիզմի որով, վոր պատգամավորները ընտրվեն և հետ կանչվեն բանվորների ու գյուղացիների համար ամենահեշտ և մատչելի յեղանակով՝ միաժամանակ Խորհրդային իշխանությունը վոչնչացնում ե պառլամենտարիզմի բացասական կողմերը, մանավանդ որենսությունը և գործադիր իշխանությունների անջատումն իրավից, ներկայացուցչական հիմնարկների կորվածությունը մասսաներից և այլն:

Խորհրդային պետությունը մոտեցնում ե պետական ապարատը մասսաներին նաև նրանով, վոր ընտրանկան միավորը և պետության հիմնական բջիջը դառնում ե վո՛չ թե տերիտորիալ ըրջանը, այլ արտադրական միավորը (գործարան, Փաբրիկա):

Կուսակցության խնդիրն այն է, վոր ամբողջ աշխատանքն այդ ուղղությամբ կատարելով՝ իշխանության որգանների և աշխատավոր մասսաների հետազամերցմանը ձգտի՝ այդ մասսաների կողմից դեմոկրատիզմը պրակտիկայում ավելի ևս խըս-

տությամբ և ավելի ևս լրիվ իրակործելու
հողի վրա՝ առանձնապես պաշտօնատար ան-
ձերի պատասխանատու և հաշվետու լինելը
կիրառելու ճանապարհով:

6. Բուրժուական դեմոկրատիան, հակա-
ռակ իր գեղարացիաներին, զորքն ունեուր
դասակարգեցի գործիք և դարձրել, այն
անջատելով աշխատավոր մասսաներից և
այն հակադրելով դրանց, զինվորների հա-
մար քաղաքական իրավունքներն իրագոր-
ծելու հնարավորությունը վոչնչացնելով
կամ դժվարացնելով, մինչեւ Խորհրդային
պետությունը ձուլում է իր որդաններում,
Խորհուրդներում, բանվորներին և զինվոր-
ներին՝ նրանց իրավունքների հավասարու-
թյան և նրանց շահերի միասնության հի-
մունքներով։ Կուսակցության խնդիրն և
պաշտպանելու ու զարգացնել բանվորների և
զինվորների այդ միասնությունը Խորհրդ-
ներում, ամրացնելով զինված ուժի անքակ-
տելի կազմ պրոլետարիատի և կիսապրոլե-
տարիատի կազմակերպությունների հետ։

7. Ամբողջ հեղափոխության մեջ քաղա-

քային արդյունաբերական պլրուետարիատի՝
վորովես աշխատավոր մասսաների ամենից
շատ համակենտրոնացած, միավորված, լու-
սավորված և պայքարում կոփված մասի՝
զեկավար գերն արտահայտվել ե թե՛ Խոր-
հուրդների առաջացման մեջ և թե՛ դրանց
զարգանալու և իշխանության որդաններ
դառնալու ամբողջ ընթացքում։ Մեր Խոր-
հրդային սահմանադրությունն արտահայ-
տել և այդ, վերապահելով արդյունաբերա-
կան պրոլետարիատին մի շարք արտօնու-
թյուններ՝ գյուղի համեմատաբար ավելի
ցրիլ մանր-բուրժուական մասսաների հան-
դեպ։

Համեմ, պարզաբանելով գյուղի սոցիա-
լիստական կազմակերպման դժվարություն-
ների հետ պատմականորեն կապված այդ
արտօնությունների ժամանակավոր բնույ-
թը, պետք է ձգտի անշեղ ու սիստեմատի-
կորեն ոգտագործելու արդյունաբերական
պրոլետարիատի այդ գրությունը, վորպես-
ով ի հակակշիռ նեղ-ցեղային և նեղ-պրոֆե-
սիոնալ շահերի, վոր կապիտալիզմն եր

սնուցում բանվորների մեջ, ավելի սերտ
կերպով միացնի գյուղական պրոլետարների
ու կիսապրոլետարների, այև միջին գյու-
ղացիության ամենից ավելի հետամնաց ու
ցրիլ մասսաներին առաջավոր բանվորների
հետ:

8. Միայն պետության խորհրդային կազ-
մակերպման չնորհիվ պրոլետարիատի հե-
ղափոխությունը կարող եր միանդամից
փշել ու հիմնահատակ անել պետության
հին, բուրժուական, չինովնիկական և դա-
տական ապարատը: Սակայն լայն մասսա-
ների վոչ-բարձրականաչափ բարձր կուլտու-
րական մակարդակը, մասսաների կողմից
պատասխանատու դիրքերում առաջ քաշված
աշխատողների անհրաժեշտ հմտության բա-
ցակայությունը կառավարման դործում,
ծանր պայմաններում հին դպրոցի մասնա-
դետներին տրաղությամբ դորձի հրավիրելու
անհրաժեշտությունը և այն, վոր քաղաքա-
յին բանվորների ամենազարդացած խավը
վերցված և զինվորական աշխատանքի,

խորհրդային կարգերում բյուրոկրատիզմի
մասնակի վերածնունդ են առաջացրել:

Ամենավճառական պայքար մղելով բյուրո-
կրատիզմի վեմ՝ Համկա այդ չարիքի լիա-
կատար Հաղթահարման համար պաշտպա-
նում և հետեւյալ միջոցները.

1) Խորհրդի* յուրաքանչյուր անդամին
պարտադիր կերպով ներդրավել պետության
կառավարման գծով վորոշ աշխատանք կա-
տարելու:

2) Հաջորդաբար փոխել այդ աշխատանք-
ներն այնպես, վոր նրանք աստիճանաբար
ընդդրկեն կառավարման բոլոր ճյուղերը:

3) Ամրող աշխատավոր բնակչությանը
զիսովին աստիճանաբար ներդրավել պե-
տության կառավարման աշխատանքի մեջ:

Այս բոլոր միջոցների լիակատար և բազ-
մակողմանի կենսադործումը վորպես մի հե-
տաղա քայլ այն ուղիով, վորի վրա կանդ-
նեց Փարիզի կոմունան, և կառավարման
ֆունկցիաների պարզացումը, աշխատավոր-
ների կուլտուրական մակարդակի բարձ-
րացման դուգընթաց, տանում են դեպի
պետական իշխանության վոչնչացումը:
Համկ(բ)կ ծրագ. և կանոն.—2

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

9. Աղղային հարցում Համեկ ղեկավարում և հետեւալ դրույթներով.

1) Ցեղակետ և ընդունվում առարքեր աղղությունների պրոլետարիների և կիսապրոլետարիների մերձեցման քաղաքականությունը՝ կալվածատերերի և բուժութուազիայի տաղալման նպատակով միատեղ հեղափոխական սլայքար մղելու համար:

2) Նպատակ ունենալով հաղթահարել ճնշած յերկիրների աշխատավոր մասսաների անխստահությունը գեղի այլ յերկիրները ճնշած պետությունների ողբուհարիչուր, անհրաժեշտ և ամեն մի աղղային խմբակցության բոլոր և յուրաքանչյուր տեսակի արտօնությունների վոչնչացում, աղղությունների լիակատար իրավահավասարություն, պետականորեն անջատվելու իրավունքի ճանաչում քաղությունների և անիրավահավասար աղղությունների համար:

3) Նույն այլ նպատակով, վորակու դեպի

լիակատար միասնություն տանող անցողիկ ձեւրից մեկը, կուսակցությունն առաջադրում և խորհրդային տիպով կազմակերպված պետությունների Փեղերատիւլ միավորումը:

4) Այս հարցում, թե ո՞վ և աղղային անջատման կամքի կրողը, Համեկ կանգնած և պատմական-դասակարգային տեսակետի վրա, հաշվի առնելով, թե իր պատմական զարգացման վո՞ր աստիճանի վրա յե կանգնած տվյալ աղղը՝ միջնադարից դեպի բուրժուական դեմոկրատիա, թի^o բուրժուական դեմոկրատիայից դեպի խորհրդային կամ պրոլետարական դեմոկրատիա տանող ճանապարհի վրա:

Համենայն դեպս այն աղղերի պրոլետարիատի կողմից, վոր ճնշող տղթեր են յեղել, անհրաժեշտ և, վոր առանձին զգուշություն և առանձին ուշադրություն հանդես բերիլ ճնշված կամ անիրավահավասար աղղերի աշխատավոր մասսաների աղղային զգացմունքների մնացորդների վերաբերմամբ: Միայն այդպիսի քաղաքականու-

թյամբ և հնարավոր պայմաններ ստեղծել
միջադաշտին պրոլետարիատի ազգայնորեն
այլատեսակ տարրերի իրոք ամուր, հոժա-
րակամ միության համար, ինչուս այդ
ցույց տվեց մի շարք ազգային խորհրդային
հանրապետությունների՝ Խորհրդային Ռու-
սաստանի շուրջը միավորվելու փորձը:

ԲԱԶՄԱԿԱՆ ԲԱԺՎԱԱՐՈՒՄ

10. Ռազմական բնագավառում կուսակ-
ցության խնդիրները վորոշում են հետե-
վյալ հիմնական դրույթներով.

1) Իմաստերիալիզմի կազմակերպման և աճող
քաղաքացիական պատերազմի դարաշրջա-
նում հնարավոր չե վոչ պահպանել հին բա-
նակը, վոչ նորը կազմակերպել այսպես կոչ-
ված ասպասակարգային կամ համազգային
հիմքերի վրա: Կարմիր բանակը՝ վորպես
պրոլետարիատի դիկտատուրայի զործիք՝
անհրաժեշտութեն պետք ե ունենա բացորոշ
դասակարգային բնույթ, այսինքն՝ կազմվի
բացառապես պրոլետարիատից և սրան մո-

տիկ՝ դյուղացիության կիսապրոլետարա-
կան խավերից: Միայն դասակարգերի վոչըն-
չացման կապահցությամբ նմանորինակ դա-
սակարգային բանակը կվերածվի համաժո-
ղովրդական սոցիալստավկան միլիցիայի:

2) Անհրաժեշտ ե բոլոր պրոլետարներին
ու կիսապրոլետարներին ամենալայն չափով
սովորեցնել ուազմական զործը և համապա-
տասիրան առարկաների դասավանդություն
մացնել դպրոցում:

3) Կարմիր բանակի ուսուցման ուսուցման
ու դաստիարակման աշխատանքը կատար-
վում ե դասակարգային համախմբման և սո-
ցիալստավկան լուսավորության հիմունքով:
Ուստի անհրաժեշտ են հուսալի և անձնվեր
կոմունիստներից քաղաքական կոմիսարներ
ուազմական պետերին կից, և կոմունիստա-
կան թշինների կազմակերպում յուրաքան-
չչուր զորամասում՝ ներքին դաղափարական
կապ և գիտակից գիտակալինա հաստատելու
համար:

4) Ի հակակչիո հին բանակի կառուցված-
քի անհրաժեշտ ե՝ զուտ զորանոցային ու-

սուցման ըստ կարելույն կարծ ժամկետ, զորանոցների մերձեցում ռազմական և ռազմա-քաղաքական դպրոցների տիպին, զինվորական կազմակերպությունների ըստ կարելույն սերտ կապի հաստատում Փարբեկաների, զործարանների, արհեստակցական միությունների, դյուլական չքավորության կազմակերպությունների հետ :

5) Յերիտասարդ հեղափոխական բանակին կարող և տրվել անհրաժեշտ կազմակերպական կատալ և կայունություն գիտակից բանվորների և դյուլացիների միջից յելած, առաջին նվազ թեկուզ ստորին, հրամանատարական կազմի ողնությամբ միայն։ Այդպատճառով, ամենից ավելի ընդունակ, յեռանդուն և սոցիալիզմի դործին նվիրված զինվորներին հրամանատարական պաշտոնների համար պատրաստելը բանակի ստեղծման գործի կարերազույն խնդիրներից մեկն եւ :

6) Անհրաժեշտ և ամենալայն կերպով ուղագործել և կիրառել վերջին համաշխարհյին պատերազմի ուղերատիվ և տեխնի-

կական փորձը։ Այս կապակցությամբ անհրաժեշտ և բանակի կազմակերպման և նրա ուղերատիվ զեկավարության գործի մեջ լայնորեն գրավել հին բանակի դպրոցն անցած զինվորական մասնագետներին։ Իր հերթին, այսպիսի ներգրավման անհրաժեշտ պայմանն և բանակի քաղաքական զեկավարությունը և հրամանատարական կազմի ամենակողմանի վերահսկողությունը կենտրոնացնել բանվոր դասակարգի ձեռքում։

7) Հրամանատարական կազմի ընտրականության պահանջը, վոր ահագին սկզբունքային նշանակություն ուներ բուրժուական բանակի վերաբերմամբ, վորտեղ հրամանատարական կազմը ջոկվում և զաստիարակվում եր վորպես զինվորների և զինվորների միջոցով՝ աշխատավոր մասսաների դասակարգային հպատակեցման արգարատ, միանդամայն կորցնում է իր սկզբունքային նշանակությունը դաստակարգային բանվորական և դյուլացիական կարմիր բանակի վերաբերմամբ։ Ընտրականության և նշանակության հնարավոր համակցումը (ԿՕՄ-

բնազր) հեղափոխական դասակարգային բանակին թելադրվում և գործնական նկատառումներով և կախված և զորամասերի կազմավորման առկա մակարդակից, համախմբվածության աստիճանից, հրամանատարական կադրերի առկայությունից և այլն:

ԴԱՏԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ

11. Իր ձեռքն առնելով ամբողջ իշխանությունը և առանց մնացորդի վերացնելով բուրժուական տիրապետության որդանները՝ նախկին կառուցվածքի դատարանները՝ պրոլետարական գեմոկրատիան բուրժուական գեմոկրատիայի «դատավորների ընտրականությունը ժողովրդի միջոցով» ֆորմուլի փոխարեն առաջ և քաշել «դատավորների ընտրականությունն աշխատավորներից՝ միայն աշխատավորների միջոցով» դասակարգային լողունը և այն կիրառել և դատարանի ամբողջ կալմակերպության մեջ, միաժամանակ հավասարեցնելով յերկու սեռերին ինչպես դատավորների ընտրու-

թյան, նույնպես և դատավորների պարտականությունները վարելու բոլոր իրավունքներում:

Պրոլետարիատի և չքավոր գյուղացիության ամենալայն մասսաներին դատավարության գործին ներդրավելու համար դատարանում մտցված և մշտապես փոխարինվող ժամանակավոր դատավորատենակալների մասնակցությունը, ցուցակները կաղմելու գործին զրավելով մասսայական բանվորական կազմակերպություններին, արհետակցական միություններին և այլն:

Նախկին տարրեր կառուցվածքի և բաղմաթիվ ինստանցիաներ ունեցող դատարանների անվերջ շարանի փոխարեն միասնական ժողովրդական դատարան ստեղծելով՝ Խորհրդային իշխանությունը պարզացրել և դատարանի կառուցվածքը՝ դատարանը բացարձակապես մատչելի դարձնելով բնակչությանը և վերացնելով դատավարության ամեն տեսակի քաջըշուկները:

Վերացնելով տապալված կառավարությունների որենքները, Խորհրդային իշխա-

նությունը հանձնարարել և Խորհուրդների ընտրած դատավիճակներին՝ իրագործել պրուետարիատի կամքը, գործադրելով նրա դեկրետները, իսկ այդպիսիների բացակայության կամ թերի լինելու գեղազում՝ ղեկավարվել սոցիալիստական իրավադիտակացությամբ։

Այս ձեռվլ կազմակերպված դատարանները՝ պատժի բնադավառում պատժի բնույթի արգելն արմատական փոփոխության են յենթարկել՝ լայն չափերով իրագործելով պայմանական դատապարտությունը, կիրառելով հասարակական պարսադաշնքը վորապես պատժի միջոց, փոխարինելով աղատազրուկումը պարտադիր աշխատանքով՝ աղատության պահպանումով, փոխարինելով բաները դաստիարակչական հաստատություններով և հնարավորություն տալով կիրառելու ընկերական դատարանների պրակտիկան։

Համեմ, հետամուս լինելով դատարանի ապագա զարդացմանն այդ իսկ ճանապարհով, ակետք և ձգտի, վորապես դատապա-

րական պարտականությունների կատարման գործի մեջ դլվովին գրավիլի ամբողջ աշխատավոր բնակչությունը, և պատիժների սիստեմը վերջնականապես փոխարինվի դաստիարակչական բնույթի կրող միջոցների սիստեմով։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

12. Ժողովրդական լուսավորության բնագավառում Համեմ նպատակ ե զնում գլուխ բերել 1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխությունից սկսած գործը՝ դպրոցը բուժուազայի դասակարգային տիբասետության գործիքոց դարձնել հասարակության դասակարգային բաժանումը լիակատար վոչընչացնելու գործիք, հասարակության կոմունիստական վերասերման գործիք։

Պրոլետարիատի գիլտատուրայի ըրջանում, այսինքն կոմունիզմի լիակատար իրագործումը հնարավոր դարձնող պայմանները պատրաստելու շրջանում, դպրոցը վոչմիայն պիտք և լինի առհասարակ կոմու-

Նիզմի սկզբունքների հաղորդիչը, այլև պրո-
լետարիատի գաղափարական, կազմակեր-
պական, գաստիարակչական աղղեցությունն
աշխատավոր մասսաների կիսապրոլե-
տարական և վոչ-պրոլետարական խավերին
հաղորդող՝ կոմունիզմը վերջնականապես
հաստատելու ընդունակ սերունդ դաստիա-
րակելու նպատակով։ Այդ ճանապարհին
ներկայիս մոտավոր խնդիրն և՝ Խորհրդային
իշխանության արգեն հաստատված դպրո-
ցական ու լուսավորական գործի հետևյալ
հիմքերի հետագա զարգացումը.

1) Զերի ու պարտադիր ընդհանուր ու պո-
լիտեխնիկական (թեորիապես և գործնակա-
նորեն արտադրության բոլոր գլխավոր ճյու-
ղերին ծանոթացնող) կրթություն յերկու
սեռի բոլոր յերեխաների համար մինչև
17 տարեկանը։

2) Ստեղծել նախադպրոցական հիմնար-
կությունների՝ մսուրների, պարտեզների, ո-
ջախների ցանց և այլն, հասարակական
դաստիարակությունը բարելավելու և կնոջ
աղաստադրելու նպատակով։

3) Լիովին իրազործել միասնական աշխա-
տանքային դպրոցի սկզբունքները՝ կատա-
րելով դասավանդումը մայրենի լեզվով,
յերկու սեռի յերեխաներին միատեղ սովո-
րեցնելով, անվայման աշխարհիկ, այսինքն
վորեե կրօնական աղղեցությունից աղասու-
ուսուցման և հասարակական-արտադրողա-
կան աշխատանքի միջև սերտ կապ հաստա-
տելով, կոմունիստական հասարակության
համար բազմակողմանի զարգացում ունեցող
անդամներ պատրաստելով։

4) Բոլոր սովորողներին պետության հաշ-
վին մատակարարել սնունդ, հագուստ,
վունաժման, ուսումնական պիտույքներ։

5) Պատրաստել կոմունիզմի զաղափարնե-
րով ներշնչված՝ լուսավորության աշխա-
տողների նոր կադրեր։

6) Ներդրապել աշխատավոր բնակչու-
թյանն ակտիվ մասնակցություն ցույց տա-
լու լուսավորության գործին («Ժողովրդա-
կան կրթության խորհուրդների» զարգա-
ցում, զբագետների մորիլիզացիա և այլն)։

7) Ցույց տալ պետական բազմակողմանի

ողնություն բանվորների և գյուղացիների ինքնակերթության և ինքնազարդացման գործին (արտադպրոցական կրթության հաստատությունների ցանցի ստեղծում—դրադարաններ, հասակավորների դպրոց, ժողովրդական տներ և համալսարաններ, դասընթացներ, դասախոսություններ, կինեմատոգրաֆներ, սոսուլիաներ և այլն) :

8) Լայնորեն զարգացնել արհեստակցական կրթությունը 17 տարեկանից բարձր հասակունցների համար, ընդհանուր պոլիտեխնիկական գիտելիքների հետ միասին:

9) Բոլոր սովորել ցանկացողների և առջին հերթին բանվորների համար լայն կերպով մատչելի դարձնել բարձրագույն դպրոցի լսարանները, բարձրագույն դպրոցում դասավանդելու դորձունեյության դրավել բոլոր նրանց, ովքեր կարող են այնտեղ ուսուցանել, թարմ գիտական ուժերի և կաֆեդրի միջև յեղած բոլոր և ամեն տեսակի արհեստական արդելքները վերացնել. սովորողներին նյութապես ապահովել՝ պողետարներին և գյուղացիներին բարձրա-

գույն դպրոցից ռետավելու փաստական հնարավորություն տալու նպատակով :

10) Հաշվասարապես անհրաժեշտ ե աշխատավորների համար բանալ և մատչելի դարձնել արվեստների ամբողջ զանձարանը, արվեստներ, վորոնք սուեղծվել են նրանց աշխատանքի շահագործման հիման վրա ու մինչև այժմ բացառապես շահագործողների անորինության տակ են գտնվել:

11) Զարդացնել կոմունիստական գաղափարների ամենալայն պլրոպագանողը և այդնպատակով ոգտագործել պետական իշխանության ապարատը և միջոցները :

ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳՎԱՎԱՐՈՒՄ

13. Կրոնի վերաբերմամբ Համկե չի բավականանում յեկեղեցու ու պետության և վականանում յեկեղեցու արդեն իսկ որինակադպրոցի ու յեկեղեցու արդեն իսկ որինականացված բաժանումով, այսինքն այն ձեռնարկումներով, վորոնք բուրժուական դիմությունների կրատիան առաջադրում ե իր ծրագրերի

մԵջ, սակայն աշխարհում վոչ մի տեղ չի
հասցրել մինչև վերջը, չորհիվ կապիտալի
և կրոնական պրոպագանդի միջև յեղած
բազմատեսակ փաստական կապերի:

Համեկ ղեկավարվում ե այն համոզումով,
թե մասսաների բովանդակ հասարակության-
տնտեսական գործունելության ոլլանաչա-
փության ու դիտակցականության իրադոր-
ծումն ե միայն, վոր կարող ե լիովին մեռց-
նել կրոնական նախապաշտումները: Կո-
սակցությունը ձգտում ե լիովին փշել
հարստահարող դասակարգերի և կրոնական
պրոպագանդի կազմակերպության միջև յե-
ղած կապը՝ նպատակնով աշխատավոր մաս-
սաների փաստական աղատադրմանը կրոնա-
կան նախապաշտումնքներից և կազմակեր-
պելով ամենալայն դիտական-լուսավորական
և հակալրոնական պրոպագանդ: Ընդունին
անհրաժեշտ ե հողատարությամբ խուսափել
հավատացյալների դղացմունքների ամեն
տեսակի վիրավորանքից, վորը տանում է
միայն դեպի կրոնական մոլեուանդության
ամբացում:

Տատեսական ԲՆԱԴԱՎԱՌՈՒՄ

1. Անշեղ շարունակել և ավարտել բուր-
ժուաղիայի սեփականապրկումը, արտադրու-
թյան ու շրջանառության միջոցները Խոր-
հըրդային հանրապետության, այսինքն բո-
լոր աշխատավորների ընդհանուր սեփակա-
նություն դարձնելը, մի գործ, վորն սկըս-
ված ե և իր դիմավոր ու հիմնական մասե-
րում արդեն վերջացած ե:

2. Իբրև Խորհրդային իշխանության ամ-
բողջ տնտեսական քաղաքականությունը վո-
րոշող, զիկավոր և հիմնական խնդիր հա-
մարել յերկրի աբասադրողական ուժերի
բարձրացումը բոլոր միջոցներով: Նկատի
ունենալով այն ծանրագույն քայլքայլածու-
թյունը, վոր աղբում ե յերկիրը, պետք ե
ամեն ինչ ստորագագամի բնակչությանն ան-
հրաժեշտ մթերքների քանակն անմիջապես
և ըստ ամենայնի շատացնելու գործնական
նպատակին: Այդ ուղղությամբ ստացված
գործնական հետեանքներով պետք ե չափ-
վի ժողովրդական անտեսության հետ կապ-

ված խորհրդային յուրաքանչյուր հիմնարկության աշխատանքի հաջողությունը:

Ընդումին անհրաժեշտ ե առաջին հերթին ուշադրություն դարձնել հետևյալի վրա.

3. Իմպերիալիստական տնտեսության կազմակրութումը խորհրդային շինարարության առաջին ժամանակաշրջանին ժառանգություն ե թողել վորոշ քառասյնություն արտադրության կազմակերպման և կառավարման մեջ: Ավելի ասին օրականուրեն և առաջ քաշվում, իբրև արմատական ինքիրոներից մեկը, յերկրի ամբողջ տնտեսական գործունեության առաջելապույն միավորումը մի համարեատական պլանով. արտադրության առավել կենտրոնացումը՝ ըստ առանձին ճյուղերի ու ճյուղերի խմբերի այն ժիավորելու և լավագույն արտադրական ժիավորների մեջ այն կենտրոնացնելու իմաստով, այլև տնտեսական խնդիրներն արագ իրագործելու իմաստով. արտադրական ամբողջ ապարատի առավել կարգավորումը, յերկրի բոլոր նյութական միջոցնե-

րի նպատակահարժար և խնայողաբար ոգուագութումը:

Ընդումին անհրաժեշտ ե հող տանել մյուս ժողովուրդների հետ անտեսական աշխատակցությունը և քաղաքական կապերն ընդունելու մասին, միաժամանակ ձգտելով միանական տնտեսական պլան սահմանել այդ ժողովուրդներից նրանց հետ, վորոնք արդեն խորհրդային կարգերի յին անցնել:

4. Մանր և տնայնագործական արդյունաբերության նկատմամբ անհրաժեշտ ե լայն կերպով ոգտագործել այն՝ տնայնագործներին պետական պատսիերներ տալու միջոցով. տնայնագործական և մանր արդյունաբերությունը մտցնել հումքանուր պլանի մեջ, ինչպես նաև Փինանսական աջակցություն ցույց տալ նրան, տնայնագործական արտելները, առանձին տնայնագործներին, արտադրական կոռպերատիվները և մանր ձեռնարկություններն ավելի խոչը արտադրական և արդյունաբերական միավորների մեջ միավորելու պայմանով. նման

միավորումներին խրախուսել նրանց տնտեսական առաջելություններ տալու միջոցով, վորոնք, մյուս միջոցների հետ մեկտեղ, նպատակ ունեն կասեցնել տնայնադորձներ՝ մանր արդյունաբերողներ դառնալու ձղտումը և սաեղծել արտադրության այդ հետամնաց ձևերի անհիվանդաղին փոխանցումն ավելի բարձր՝ խոշոր մեքենայացված ինդուստրիալի:

Յ. Հանրայնացրած արդյունաբերության կազմակերպական ապահատն առաջին հերթին պետք է հենվի արհեստակշական միությունների վրա: Նրանք պետք է միշտ ավելի և ավելի աղատագրվեն ցեխային սահմանափակությունից ու դառնան խոշոր արտադրական միավորումներ, վորոնք ընդդրկում են արտադրության տվյալ ճյուղի աշխատավորների մեծամասնությունը, իսկ աստիճանաբար նաև բոլորին դլխովին:

Խորհրդային հանրապետության որենքների և հաստատված պրակտիկայի համաձայն արդեն, մասնակցություն ունենալով արդյունաբերության կառավարման բոլոր տե-

ղական և կենտրոնական որդաններում՝ ձեւադայում արհեստակցական միությունները պետք է փաստորեն իրենց ձեռքում կննտրոնացնեն ամբողջ ժողովրդական արևտեսության, վորակս միասնական տնտեսական ամբողջության, բովանդակի կառավարումը: Այդպիսով՝ ապահովելով կենտրոնական պետական կառավարման, ժողովրդական տնտեսության և աշխատավորության լայն մասսաների անքակտելի կապը՝ արհեստակցական միությունները պետք է վերջիններիս ամենալայն չափույթ ներդրավեն տնտեսավարության անմիջական աշխատանքի մեջ: Միաժամանակ արհեստակցական միությունների մասնակցությունը տնտեսավարությանը և նրանց միջոցով լայն մասսաների գրավումը այդ գործին՝ Խորհրդային իշխանության տնտեսական ապահատի բյուրոկրատացման դեմ պայքարելու գլխավոր միջոցն է և հնարավորություն և տալիս իրոք ժողովրդական վերահսկողություն հաստատելու արտադրության արդյունքների վրա:

6. Ժողովրդական տնտեսության պլանա-
չափ զարգացման նպատակով պետության
մեջ յեղած ամբողջ աշխատանքային ռուժի
անհրաժեշտ առավելացույն ոգտագործումը,
նրա ճիշտ բաշխումն ու վերաբաշխումը ինչ-
պես տարրեր տերթորիալ մարզերի, նույն-
պես և ժողովրդական տնտեսության տարրեր
ճյուղերի միջև, պետք է կազմի Խորհրդային
իշխանության տնտեսական քաղաքականու-
թյան մոտակա խնդիրը, քաղաքականու-
թյուն, վորը կարող է իրագործվել նրա կող-
մից՝ միայն սերտ կապ պահպանելով ար-
հեստակցական միությունների հետ։ Վորոշ
հասարակական աշխատանքներ կատարելու
համար արհեստակցական միությունների
մասնակցությամբ ամբողջ աշխատանքի
բնակչության գլխովին մորթիկացիան Խոր-
հրդային իշխանության կողմից պետք է
անհամեմատ լայն ու ավելի սիստեմատիկո-
րեն կիրառվի, քան այդ արվել է մինչև
հիմա։

7. Աշխատանքի կապիտալիստական կադ-
րակերպման անկման պայմաններում յերկրի
54

արտադրական ռեժիսորը կարող են վերական-
ունիվել ու զարգանալ, իսկ արտադրության
սոցիալիստական յեղանակը կարող է ամրա-
նալ միայն աշխատավորների ընկերային
կարգապահության, նրանց առավելագույն
ինքնազործունելության, պատասխանա-
տվության գիտակցության և աշխատանքի
արդյունավետության նկատմամբ փոխա-
դրարձ ամենախիստ վերահսկողություն սահ-
մանելու հիման վրա։

Այդ նպատակին հասնելը համառ, սիստե-
մատիկ աշխատանք և պահանջում մասսանե-
րի վերադաստիարակման գործում, վորը
դյուրացված է այժմ հենց չնորհիվ նրա,
վոր մասսաները դորձնականում տեսնում
են կապիտալիստին, կարվածատիրոջը և
վաճառականին հեռացնելը և սեփական
պրակտիկայի փորձով այն համոզման են
դալիս, վոր իրենց բարեկեցության մա-
կարդակը բացառապես իրենց սեփական աշ-
խատանքի կարգապահությունից ե կախ-
ված։

Նոր սոցիալիստական կարգապահության

ստեղծման այս աշխատանքում գլխավոր գերն ընկնում ե արհեստակցական միությունների վրա։ Վերջիններս, հրաժարվելով հին շարլոնից, այդ նպատակն իրազործելու համար պետք ե գործնականում կիրառեն ու փորձեն դանագան տեսակի միջոցառումներ, ինչպես, որինակ, սահմանել հաշվետվություն, արտադրանքի նորմաներ, սահմանել սպառավանատվություն հատուկ ընկերական բանվորական դատարանների առաջ և այլն։

8. Արտադրողական ուժերի զարգացման նույն ինդիքը պահանջում ե անհապաղ, լայնորեն ու բարդակողմանի ոգտագործել կապիտալիզմի մեջ ժառանգություն թողած՝ զիտության և տեխնիկայի մասնագետներին, չնայած այն բանին, վոր նրանք շատ դեպքերում անխռուսափելիորեն համակված են բուրժուական աշխարհայեցողությամբ ու սովորություններով։ Կուտակցությունը դանում ե, վոր վերջացել ե այս խավի հետ սուր պայքարի շրջանը, վորն առաջ եր յեկել նրա կողմից կազմակերպված սաբուտ-

ժի շնորհիվ, քանի վոր այդ սաբուտաժն ընդհանուր առմամբ խորտակված է։ Սերտ կապ պահպանելով արհեստակցական միավորումների հետ, կուտակցությունը պետք ե առաջ տանի իր նախկին գիծը։ մի կողմից ամենափոքր քաղաքական դիջումն իսկ չանել տվյալ բուրժուատվական խավին և անխնանշել նրա հակածեղափոխական ամեն մի վոտնձգությունը, իսկ մյուս կողմից՝ նույնքան անխնա կովել այն կեղծ-արմատական, բայց իրոք տղետ մեծամասության դեմ, թե իրը աշխատավորնելն իսլիճակի յեն հաղթահարել կապիտալիզմն ու բուրժուատվական կարգերը՝ չուսանելով բուրժուատվական մասնագետներից, չոգտագործելով նրանց, չանցնելով նրանց հետ միասին աշխատանքի յերկարատև գլորոց։

Զգտելով ամեն մի աշխատանքի վարձարության հավասարության ու լիակատար կոմունիզմի, Խորհրդային իշխանությունը չի կարող իր ինդիքը համարել այդ հավասարության անհապաղ իրագործումը տվյալ մոմենտում, յերբ կապիտալիզմից կոմու-

Նիզմին անցնելու միայն առաջին քայլերն են արվում: Ուստի անհրաժեշտ է մի վորոշ ժամանակ դեռ պահպանել մասնագետների ավելի բարձր վարձատրությունը, վորպեսզի նրանք կարողանան աշխատել վոչ թե վատ, այլ ավելի լավ, քան առաջ, և հենց նույն նպատակի համար չի կարելի հրաժարվել սլրեմիաների սիստեմից՝ ամենից ավելի հաջող և մասնավանդ կազմակերպչական աշխատանքի համար:

Հայաստարապես անհրաժեշտ է բուրժուական մասնաշետներին գնել ընկերային ընդհանուր աշխատանքի պայմանների մեջ՝ ձեռք-ձեռքի տված շարքային բանվորների մասսայի հետ, բանվորների, վորոնք զեկավարվում են դիտակից կոմունիտերի կողմից, և դրանով նպաստել, վոր կապիտալիզմի կողմից իրարից բաժանված Փիղիկական և մտավոր աշխատադիրը փոխադարձարար հասկանան և մոտենան իրար:

9. Խորհրդային իշխանությունն արգեն մի շաբթ միջոցներ և ձեռնարկել, վորոնք

նպատակ ունեն զարդացնել գիտությունը և այն մոտեցնել արտադրությանը. ստեղծել նոր դիտական-գործնական ինստիտուտների, լարորատորիաների, հետազոտական կայանների, նոր տեխնիկական մեթոդները, կատարելագործումները և գյուտերն ստուգելու փորձնական արտադրությունների մի ամբողջ ցանց, բոլոր գիտական ուժերի ու միջոցների հաշվառում և այլն: Համկու, պաշտպանելով բոլոր միջոցները՝ ձկտում են բանց հետազարդացմանը և գիտական աշխատանքի համար նպաստավոր պայմաններ ստեղծելուն արտադրողական ուժերի բարձրացման կաղակցությամբ:

ԳՅՈՒՂԱՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

10. Խորհրդային իշխանությունը, երադորձելով հողի մասնավոր սեփականատիրության լիակատար վերացումը՝ անցել եարդեն մի շաբթ միջոցների կննադորձմանը, վորոնք հետապնդում են խոչը սոցիալիստական աշխատական կողադրության կաղմաւերպությունը:

Այդ միջոցներից ամենակարևորներն են.

1) Խորհրդային տնտեսությունների, այսինքն՝ խոշոր սոցիալիստական տնտեսությունների կազմակերպումը. 2) աջակցություն ցույց տալ հողը հասարականորեն մշակող միություններին, այլև ընկերություններին. 3) կազմակերպել սեռական ցանքս բոլոր չցանված հողերի, ում ել նրանք պատկանելիս լինեն. 4) բոլոր աղբոնոմիական ուժերի սեռական մորիլվացիս՝ գյուղատնտեսական կուլտուրան բարձրացնելու ուղղությամբ յեռանդուն միջոցների դիմելու համար. 5) աջակցություն ցույց տալ գյուղատնտեսական կոմունաներին, իրեն հողագործների միանդամայն հոժարակամ միությունների, խոշոր ընդհանուր տնտեսություն վարելու համար:

Բոլոր այդ միջոցները դիտելով իրեն գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականության բացարձակ անհրաժեշտ բարձրացման միակ ճանապարհ՝ Համկե ձգտում ե ըստ կարելույն լիակատար կերպով կենսագործել այդ միջոցները, տարա-

ծել նրանց յերկրի ավելի հետամնաց շըր-ջաններում և նույն ուղղությամբ հետագա քայլերի:

Համկե առանձնապես պաշտպանում ե.

1) Գյուղատնտեսական մթերքների վերամշակմամբ զբաղված գյուղատնտեսական կոոպերացիայի ամեն ձեի պետական ոժանդակությունը.

2) լայն կերպով կերպառված հողի մելիորացիայի սկսումը.

3) Քբավոր և միջակ գյուղացիությանը ինվենտարով լայն ու պլանաչափ մատակարակելը վարձատու կայանների միջոցով:

Հայվի առնելով այն հանդամանքը, վոր մանը գյուղացիական տնտեսությունը գեռ յերկու պիտի գոյություն ունենա, Համկե ձգտում ե իրագործել մի շարք միջոցներ, վորոնց նպատակն ե բարձրացնել գյուղացիական տնտեսության արտադրողականությունը: Այլպիսի միջոցներ են հանդիսանում՝ 1) գյուղացիական հողոգտագործման կարգավորումը (հողերի ցըվածության, հեռավորության և այլն վերացումը). 2) Գյու-

ղացիներին լավորակ հացահատիկներ և արհեստական պարարտանյութեր մասրակարարելը . 3) գյուղացիական անաստաների տեսակի լավացումը . 4) աղբոնոմիական գիտելիքներ տարածելը . 5) գյուղացիներին ազգոնոմիական ոգնություն ցույց տալը . 6) գյուղացիների ինվենտարի նորոգումը խորհրդային նորոգող արհեստանոցներում . 7) վարձատու կետերի , փորձակայանների , ցուցադաշտերի կազմակերպումը . 8) գյուղացիական հողերի մելիորացիան :

11. Նկատի ունենալով , վոր Հակաղըությունը քաղաքի և գյուղի միջև գյուղի տնտեսական և կուլտուրական հետամնացության ամենախոր հիմքերից մեկն և , իսկ այնքան խոր ճնշաժամի դարաշընուամ , ինչպիսին և ներկայիսը , թե՛ քաղաքը և թե՛ գյուղը այլասերման և կործանման անմիջական վտանգի առաջ և դնում , Համկար այդ հակաղության վոչնչացման միջ և տեսնուամ կոմունիստական շինարարության հիմնական խնդիրներից մեկը և , ընդհանուր միջոցների շարքին , անհրաժեշտ է դաշնության լավորակ հացահատիկ գործում :

արդյունաբերական բանվորներին լայնորեն և պլանաչափ գրավել կոմունիստական շինարարության հողագործության մեջ , անհրաժեշտ է համարում այդ նպատակներով Խորհրդային իշխանության կողմէից արդեն հիմնված համապետական «Բանվորական ոժանդակող կոմիտեյի» գործունեյության զարգացումը և այլն :

12. Գյուղում կատարելիք իր ամբողջ աշխատանքում Համկար առաջվա պես հենցում ե նրա պրոլետարական և կիսապրոլետարական խավերի վրա , կազմակերպում ե նախ և առաջ նրանց իրակ ինքնուրասյն ուժ , ստեղծելով գյուղում կուսակցական բջիջներ , չքավորության կազմակերպություններ , գյուղի պրոլետարների ու կիսապրակետարների հատուկ տիպի արհեստակայան միություններ և այլն , ամեն կերպ նրանց մերձեցնելով քաղաքային պրոլետարիատին և պոկելով նրանց գյուղական բուրժուազիայի ու մանր սեփականատիրական շահերի աղեցությունից :

Կուլակների , գյուղական բուրժուազիայի

նկատմամբ Համեկի քաղաքականությունն ե՝
վճռական պայքար մղել նրանց շահագործո-
ղական վոտնձությունների դեմ, ճնշել
նրանց դիմադրությունը խորհրդային քա-
ղաքականությանը:

Միջակ գյուղացիության նկատմամբ
Համեկի քաղաքականությունն ե՝ նրան աս-
տիճանաբար և պլանաշափ կերպով սոցիա-
լիստական շինարարության մեջ ներգրավել:
Կուսակցությունն իր խնդիրն ե համարում
անջատել նրան կուլակներից, նրան գրավել
բանվոր դասակարգի կողմը՝ ցույց տալով
ուշադիր վերաբերմունք վեպի նրա կարիք-
ները, պայքարելով նրա հետամնացության
դեմ գաղափարական ներգրածության միջոց-
ներով, վոչ յերբեք ճնշման միջոցներով,
ճգուելով ամեն դեպքում, վորտեղ նրա կեն-
սական շահերն են շոշափել, գործնական
համաձայնության գալ նրա հետ, զիջումներ
անելով նրան սոցիալիստական վերակառու-
ցումների կիրառման յեղանակները վորոշե-
լու մեջ:

ԲԱՇԽԱՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

13. Բաշխաման բնագավառում ներկայումս
Խորհրդային իշխանության խնդիրն ե՝ ան-
չեղ կերպով շարունակել առևտուի փոխարի-
նումը մթերքների պլանաշափ, համապետա-
կան մասշտաբով կազմակերպված բաշխու-
մով: Նպատակ է հանդիսանում ամբողջ
բնակչությունը կազմակերպել սպառողական
կոմունաների միասնական ցանցում, վորոնք
ամենամեծ արագությամբ, պլանաշափու-
թյամբ, խնայողությամբ և աշխատանքի
նվազագույն ծախսումով պետք ե կարողա-
նան բաշխել բոլոր անհրաժեշտ մթերքները՝
խստորեն կենտրոնացնելով ամբողջ բաշխ-
ման ավարատը:

Սպառողական կոմունաների և նրանց
միավորումների հիմքում պետք ե դրված
լինի գոյություն ունեցող համաքաղաքա-
ցիական և բանվորական կոռպերացիան,
վոր սպառողների ամենախոչոր կազմակեր-
պությունն ե և կապիտալիզմի պատմու-

թյամբ ամենից չառ նախապատրաստված՝
բաշխման մասսայական ապարատն եւ:

Սկզբունքորեն միակ ճիշտը համարելով
կոռպերատիվ ապարատի հետագա կոմու-
նիստական այդ տեսակ զարգացումը և վոչ
թե այն մի կողմ նետելը, Համկա սիստե-
մատիկորեն պետք ե շարունակի իր քաղա-
քականությունը, պետք ե պարտավորեցնի
կուսակցության բոլոր անդամներին աշխա-
տել կոռպերատիվներում, վերջիններիս, նաև
արհեստակցական միությունների ողնու-
թյամբ, կոմունիստական վողով ղեկավարի,
զարդացնի կոռպերատիվում միավորված աշ-
խատավոր բնակչության ինքնազործունե-
յությունը և կարգապահությունը, հասնի
այն բանին, վոր ամբողջ բնակչությունն
ընդգրկվի կոռպերատիվներում, և վորպեսզի
այդ կոռպերատիվները ձուլվեն մի միասնա-
կան, վերից վար ամբողջ Խորհրդային հան-
րապետությունն ընդգրկող կոռպերատիվի
մեջ. վերջապես, և ամենագլխավորը, պրո-
լետարիատի գերակշռող ազգեցությունը աշ-

խատավորների մնացած խավերի վրա մշտա-
պես ապահովված լինի և վոր ամենուրեք
գործնականում փորձվեն տարրեր միջոցներ,
վորոնք հեշտացնում են և իրազործում հին
կապիտալիստական տիպի մանր-բուրժուա-
կան կոռպերատիվների փոխանցումը պրո-
լետարների և կիսարարութեարների կողմից
զեկավարվող սպառողական կոմունաների:

ՓՈՂԱՅԻՆ ՑԵՎ ԲԱՆԿԱՑԻՆ ԳՈՐԾԻ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄԻՄ

14. Խուսափելով Փարիզի կոմունայի
սխալներից՝ Խորհրդային իշխանությունը
Ռուսաստանում միանգամից զրավեց Պետա-
կան բանկը, ապա անցավ մասնավոր առե-
տրական բանկերի ազգայնացման, ձեռնար-
կեց ազգայնացրած բանկերը, խնայողական
գանձարկները և զանձատները Պետական
բանկի հետ միավորելը, այդպիսով ստեղծե-
լով Խորհրդային հանրապետության միաս-
նական ժողովրդական բանկի կմախքը և
բանկը Փինանսական կապիտալի տիրապե-

տության տնտեսական կենտրոնից ու շահագործողների քաղաքական տիրապետության գործիքից վերածեց բանվորական իշխանության գործիքի ու տնտեսական հեղաշրջման լծակի: Նորատակ դնելով Խորհրդային իշխանության սկսած գործի հետաղ հետեղական ավարտումը, Համկե առաջին հերթին առաջ ե քաշում հետեւյալ ակզբունքները.

1) ամբողջ բանկային գործի մոնոպոլիացիան Խորհրդային պետության ձեռքում:

2) բանկային ռուերացիաների արմատական փոփոխումն ու պարզացումը՝ բանկային առարատը Խորհրդային հանրապետության միակերպ հաշվառման և ընդհանուր հաշվառահության ապարատի վերածելու ճանապարհով: Պահանջանակական տնտեսության կազմակերպմամբ այդ հասացնի բանկի վոչնչացմանը և այն կվերածի կոմունիստական հաշվապահության:

15. Կապիտալիզմից կոմունիզմին անցնելական հաշվապահության:

լու առաջին չրջանում, քանի դեռ լիովին չի կաղմակերպված մթերքների կոմունիստական արտադրությունը և բաշխումը, փողի վոչնչացումը հնարավոր չե: Այդպիսի դրության ժամանակ բնակչության բուրժուական տարրերը շարունակում են ողտագործել իրեն մասնավոր սեփականություն մնացած դրամանիշները՝ սպեկուլացիայի, հարստանալու և աշխատավորներին կողոպատելու նպատակով: Հենվելով բանկերի աղքայնացման վրա, Համկե ձգտում է կիրառել մի շարք միջոցներ, վորոնք ընդլայնում են անփող հաշվարկի բնագավառն ու նախապատրաստում փողերի վոչնչացումը, այն ե՝ փողերի պարտադիր պահումը ժողովրդական բանկում, բյուջետային գրքույկների գործադրումը, փողի փոխարինումը չեկերով, մթերքներ ստանալու իրավունք տվող կարճատև տոմսերով և այլն:

ՖԻՆԱՌԱՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ

16. Կապիտալիստներից խլած արտադրական միջոցների սկսված հանրայնացման դարաշրջանում պետական իշխանությունը դադարում է լինել մարկարույժ ապարատ, վոր կանգնած և արտադրական պրոցեսից հեռու. նա սկսում է վերածվել մի կազմակերպության, վոր անմիջականորեն կատարում և յերկրի տնտեսության կառավարման Փունկցիան, և նույն չափով ել պետական բյուջեն դառնում և ամբողջ ժողովրդական տնտեսության բյուջե։

Այս պայմաններում յեկամուտների և ծախսերի հաշվեկշիռն իրադորձելի յե միայն արդյունքների սլանաչափ պետական արտադրության և բաշխման ճիշտ կազմակերպման դեպքում։ Իսկ ինչ վերաբերում է անմիջական պետական ծախքերը ծածկելուն անցողիկ եպոխայում, առաջ համեմ պետք և պաշտպանի սոցիալիստական հեղափոխության առաջին շրջանում կապիտալիստների վրա դրած պատմականորեն անհրաժեշտ

որ ինակոր կոնտրէրուցիաների սխառեմից պլոդեսիվ յեկամուտային և գույքային հարկի անցնելը։ Իսկ վորչափ վոր այդ հարկն ինքը վերացնում է իրեն, չնորհիվ ունեռը դասակարգերին լայն կերպով եքսպրոպրիացիայի յենթարկելուն, պետական ծախքերի ծածկումը պետք է հանդչի պետական մենաշնորհներից ստացած յեկամուտների մի մասի անմիջական շրջանառության վրա իբրև պետական յեկամուտ։

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԲՆԱԳԱՎԱՐՈՒՄ

17. Զգտելով լուծել պատերազմի ժամանակաշրջանում առանձնապես սրված բնակարանային հարցը՝ Խորհրդային իշխանությունը լիովին խլել է կապիտալիստական տնտեսերերի բոլոր տները և հանձնել քաղաքային խորհուրդներին. կատարել է ծայրամասերի բանվորների մասսայական տեղափոխություն բուրժուական տները. այդ աներից լավագույնները տվել են բանվորական կազմակերպություններին, պետության

Հայովին առնելով այդ շինությունների պահ-
պանությունը. ձևանարկել և բանվորական
ընտանիքներին կահկարասիներով ապահո-
ջելուն և այս:

Նշանալով գերոհիշյալ ուղիով և բնալ
շոշափելով վոչ-կապիտալիստական տնա-
կարության շահերը՝ Համկի խնդիրն այն ե,
ուժություն ձեռքով ձեռքի բարելավել աշխա-
տաւանների բնակարաններին պայ-
ն ը, այն ե՝ գերացնել հին քա-
ղաքամասերի բնակչության կուտակումը և
հակառ ողջապահականությունը, վոչնչաց-
նել անօրետք բնակարանները, վերաշնել
հները, շինել նորերը, վորոնք համապատաս-
խանում են բանվորական մասսաների դո-
ւության նոր պայմաններին, տեղավորել
աշխատավորներին նպատակահարմար կեր-
պով:

Աշխատավոր ուժության ՅԵԿ ՍՈՑԻՒԼԱԿԱՆ
ԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՎԱԿԱՐՈՒՄ

Պրոլետարիատի դիկտատուրայի հաստա-
տումով առաջին անդամն ե, վոր հնարավո-
Դ:

բություն և ստեղծվում լիովին իրադործելու
սոցիալիստական կուտակցությունների մի-
նիմում-ծրագիրն աշխատանքի պաշտպանու-
թյան բնագավառում:

Խորհրդային իշխանությունն որենսդրա-
կան կարգով անց ե կացրել և «Աշխատան-
քի որենքների կողեքսում» հաստատել և բու-
լոր աշխատավորների համար Ճ-Փամյա բան-
վորական որ, իրեւ աշխատանքի առավելա-
գույն ժամանակ, ընդումը՝ 18 տարեկան
հասակին չհասած անձերի, արտադրության
առանձնապես վնասակար ճյուղերում, այլև
հողի տակ զբաղված լեռնաբղյունաբերական
բանվորների բանվորական որը 6 ժամից
չափեաք և անցնի. բոլոր աշխատավորների
համար շաբաթական 42-ժամյա անընդհատ
հանգիստ. արտաժամյա աշխատանքների
արգելում՝ վորպես ընդհանուր կանոն. Ժա-
նուկների և մինչեւ 16 տարեկան անչափա-
հասների աշխատանքից ողտվելու արգելում.
Պիշերային աշխատանքի և արտադրության
առանձնապես վնասակար ճյուղերի աշխա-
տանքի, այլև արտաժամյա աշխատանքի

արգելում՝ իդական սեռին պատկանող բոլոր
անձերի և 18 տարեկանը չհասած արական
սեռի անձերի համար։ Կանանց աշխատան-
քից աղատելը 8 շաբաթ ծննդաբերությունից
առաջ և 8 շաբաթ ծննդաբերությունից
հետո՝ պահպանելով լրիվ աշխատավարձն
այդ ամբողջ ժամանակամիջոցում և ցույց
տալով բժշկական ու դեղային ձրի ողնու-
թյուն։ յուրաքանչյուր 3 ժամը մեկ անդամ
բանվորուհիներին հատկացնել առնվազն
կես ժամ յերեխային կերպակրելու համար և
տալ լրացրուցիչ նպաստ կերպարող մայրե-
րին։ արհեստակցական միությունների խոր-
հուրդների կողմից ընտրված աշխատանքի
տեսչություն և սանիտարական տեսչու-
թյուն։

Խորհրդային իշխանությունն որենադրա-
կան կարգով անց ե կացրել ուրիշի աշխա-
տանքը չահագործող բոլոր աշխատավորնե-
րի լիակատար սոցիալական ասլահովագրու-
թյուն աշխատունակության ամեն տեսակի
կորստից և աշխարհում առաջին անդամ ա-
պահովագրություն գործադրկությունից՝ ի

հաշիվ վարձողների և պետության, ապահո-
վագրվածների լիակատար ինքնարվարու-
թյամբ և արհեստակցական միությունների
լայն մասնակցությամբ։

Դեռ ավելին. Խորհրդային իշխանությու-
նը վորոշ տեսակետից ծրագիր-մինիմումից
դեռն ե անցել և նույն «Աշխատանքի ո-
րենքների կողեքսում» սահմանել ե բանվո-
րական կաղմակերպությունների մասնակ-
ցություն վարձելու և արձակելու հարցերը
լուծելու մեջ։ մի տարուց վոչ պակաս ան-
դադար աշխատած բոլոր աշխատավորներին
միամյա արձակուրդ՝ ոոճկի պահպանու-
մով. աշխատավարձի պետական կանոնավո-
րում՝ արհեստակցական միությունների
մշակած տարիվների հիման վրա։ վորոշ որ-
դաններ, այն ե՝ Խորհուրդներին և արհես-
տակցական միություններին կից բաշխման
և հաշվառման բաժիններ, վորոնք պարտա-
վոր են դործ տալ գործազուրկներին։

Սակայն պատերազմի առաջացրած ծայ-
րահեղ ավերածությունը և համաշխարհային
իմպերիալիզմի գրոհը հարկադրել են Խոր-

Հըրդային իշխանությանը հետևյալ շեղումներն անել. թույլ տալ արտաժամյա աշխատանք կիրառել բացառիկ դեպքերում, սահմանափակելով այն տարեկան 50 որով. թույլատրել 14-ից մինչև 16 տարեկան անշափահաների աշխատանքը, սահմանափակելով նրանց աշխատանքի որը 4 ժամով. միաժամյա արձակուրդի փոխարեն տալ առաջժըմ յերկու շաբաթվա արձակուրդ, յերկարացնել գիշերային աշխատանքի տևողությունը մինչև 7 ժամ :

ՀամկԿ պետք ե լայն պրոպագանդ մղի աշխատալորներին աշխատանքի պաշտպանության բնագավառում ձեռնարկած բոլոր միջոցների յեռանդուն գործադրության մեջ ակտիվ կերպով մասնակից դարձնելու նպատակով, վորի համար անհրաժեշտ ե՝

1) ուժեղացնել աշխատանքի տեսչության կազմակերպման և ընդարձակման աշխատանքը՝ այդ նպատակով բանվորների միջից ակտիվ աշխատողներ ջոկելու և նախապատրաստելու միջոցով և տեսչությունը

մանր և տնային արդյունաբերության վրան տարածելու ուղղությամբ .

2) տարածել աշխատանքի պաշտպանությունն աշխատանքի բոլոր տեսակների վրա (կառուցող բանվորների, ցամաքային-ջրային տրանսպորտի, սպասավորների և գյուղատնտեսական բանվորների) .

3) աշխատանքից վերջնականապես հանել փոքրահասակներին և կիրառել դեռահասների աշխատանքային որվա հետագա կըրճատումը :

Բացի այդ, ՀամկԿ պետք ե նպատակ դնի սահմանել՝

1) առաջիկայում աշխատանքի արտադրողականության ընդհանուր բարձրացմանը զուգընթաց՝ 6-ժամյա առավելադույն աշխատանքային որ, առանց աշխատանքի վարձատրության նվազեցման, պարտավորեցնելով աշխատավորներին դրանից դուրս՝ առանց հատուկ վարձատրության, յերկու ժամ հատկացնել արհեստի և արտադրության թեորիային, պետական կառավարման

տեխնիկայի գործնական ուսուցմանը և
ռազմական արվեստին.

2) աշխատանքի արտադրողականությունը
բարձրացնելու համար մտցնել վարձատրու-
թյան խրախուսիչ սիստեմ :

Սոցիալական առահովության բնագավա-
ռում համկե ճգում ե լայն պետական ող-
նություն կաղմակերպել վոչ միայն պատե-
րազմի և տարերային դժբախտությունների
դոհերին, այլև հասարակական հարաբերու-
թյունների աննորմալությունների դոհերին.
Վճռական պայքար ե մղում ամեն տեսակի
մակարուծության ու ճրակերության դեմ
և նպատակ ե դնում դեպի աշխատանքային
կյանքը վերադարձնել յուրաքանչյուրին, ով
դուրս ե ընկել աշխատանքի հոմից :

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՄԱՀՈՒԹՅԱՆ ԲԱԳԱՎԱՐՈՒՄ

Ժողովրդական առողջապահության բնա-
գավառում համկե իր գործունեյության
հիմք ե ընդունում ամենից առաջ լայն
առողջապահական և սանիտարական մի շարք

միջոցների գործադրությունը, վորոնք
նպատակ ունեն կանխել հիվանդությունների
զարգացումը : Պրոլետարիատի դիկտատու-
րան արդեն հասարակություն ե տվել կեն-
սագործելու մի շարք առողջապահական ու
բուժական միջոցներ, վորոնք անիրազործելի
յեն բուրժուական հասարակության ըրջա-
նակներում՝ դեղատնային գործի, խոշոր
մասնատիրական բուժարանների, կուրորտ-
ների աղղայնացում, բժշկական աշխատան-
քային ուժերի աշխատանքային պարհակու-
թյուն և այլն :

Սրան համապատասխան համկե իր մոտա-
կա խնդիրն ե համարում՝

1) վճռականորեն գործադրել հոգուտ աշ-
խատավորների մի շարք սանիտարական
միջոցներ, վորոնք են .

ա) բնակավայրերի առողջացումը (հո-
ղի, ջրի և օդի պահպանումը) .

բ) հասարակական սննդի կաղմակերպումը
դիտական-առողջապահական հիմունքներով .

գ) վարակիչ հիվանդությունների զարգա-

ցումն ու ապրածումը կանխող միջոցների
կազմակերպումը.

դ) սանիտարական որենսդրության հիմ-
նումը.

2) սոցիալական հիվանդությունների (թո-
քախտ, վեներական հիվանդություն, ալկո-
հոլիզմ և այլն) գեմ պայքարը.

3) հանրամատչելի անվճար և վորակյալ
բուժական ու դեղային ոգնության ապահո-
վումը;

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
(ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կռմունիստական ինժերնացիոնալի սեկցիա

Միաձայն ընդունված և Համկ(թ)Կ XVII համագումարի
կողմէց. 1934 թ. փետրվարի 10-ին

Համամիութենական կոմունիստական
(բոլշևիկների) կուսակցությունը, լինելով
կոմունիստական ինտերնացիոնալի սեկ-
ցիան, ԽՍՀՄ պրոլետարիատի առաջավոր,
կազմակերպված ջոկատն ե, նրա դասակար-
դային կազմակերպության բարձրագույն
ձևը:

Կուսակցությունն իրագործում ե պրոլե-
տարիատի, աշխատավոր գյուղացիության
և բոլոր աշխատավոր մասսաների ղեկավա-
րումը՝ պրոլետարիատի դիկտատուրայի
համար, սոցիալիզմի հաղթանակի համար
մղվող պայքարում:

Կուսակցությունը ղեկավարում ե պրոլե-
տարական դիկտատուրայի բոլոր որդանները
և ապահովում ե սոցիալիստական հասարա-
կության հաջող կառուցումը:

Կուսակցությունը պրոլետարական դիտա-
կից յերկաթակուռ կարգավահությամբ
չաղկապված միասնական մարտական կաղ-

մակերպություն ե: Կուսակցությունն ուժեղ
ե իր համախմբվածությամբ, կամքի միաս-
նությամբ և գործողությունների միասնու-
թյամբ, վորոնք անհամատեղելի յեն ծրա-
դրից նահանջելու, կուսակցական կարգա-
պահությունը խախտելու և կուսակցության
ներսում Փրակցիոն խմբավորումների հետ:

Կուսակցությունն իր անդամներից պա-
հանջում ե ակտիվ և անձնվեր աշխատանք՝
իրազործելու կուսակցության ծրագրին ու
կանոնադրությունը, կատարելու կուսակ-
ցության և նրա որդանների բոլոր վորո-
շումները, ապահովելու կուսակցության
շարքերի միասնականությունը և ամրացնե-
լու յեղայրական, ինտերնացիոնալ հարա-
բերությունները թե՛ ԽՍՀՄ աղջություննե-
րի աշխատավորների միջն և թե՛ աշխարհի
բոլոր յերկիրների պրոլետարների հետ:

I. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՑԵՎ ՆՐԱՆ ՏԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Կուսակցության անդամ ե համարվում
ամեն վոք, ով ընդունում է կուսակցության
84

ծրագիրը, աշխատում է նրա կազմակերպու-
թյուններից մեկի մեջ, յենթարկվում է կու-
սակցության վորոշումներին և մուծում է
անդամավճար :

2. Կուսակցության անդամը պարտավոր
է.

ա) պահպանել կուսակցական խստա-
գույն կարգապահություն, ակտիվորեն
մասնակցել կուսակցության ու յերկրի քա-
ղաքական կյանքին, գործնականում կիրա-
ռել կուսակցության քաղաքականությունը
և կուսակցական որդանների վորոշումները.

բ) անդուլ աշխատել իր գաղափարական
զինվածությունը բարձրացնելու, մարքսիզմ-
լենինիզմի հիմունքները, կուսակցության
կարևորագույն քաղաքական ու կազմակեր-
պական վորոշումները յուրացնելու համար
և բացատրել գրանք անկուսակցական մաս-
սաներին.

գ) վորպես Խորհրդային պետության մեջ
կառավարող կուսակցության անդամ՝ որի-
նակ լինել աշխատանքային ու պետական
կարգապահության պահպանման, տիրապե-

տել իր գործի տեխնիկային, անընդհան
բարձրացնելով իր արտադրական, գործնա-
կան վորակալորումը:

3. Անդամների ընդունելությունը կու-
սակցության մեջ կատարվում է բացառա-
պես անհատական կարգով: Նոր անդամներ
ընդունվում են այն թեկնածուների թվից,
վորոնք անցել են սահմանված թեկնածուա-
կան ստաժը, քաղաքական գրադիտության
դպրոցը և յուրացը ել են կուսակցության
ծրագիրն ու կանոնադրությունը: Կուսակ-
ցության անդամ են ընդունվում բանվորնե-
րը, կոլտնտեսականները, կարմիր-բանա-
կայինները, ուսանողները և ծառայողները,
վորոնք իրենց ցույց են տվել համակրողնե-
րի խմբակներում, խորհուրդներում, արհ-
միություններում, կոմյերիտմիության մեջ,
կոոպերացիայում, պատգամավորական ժո-
ղովներում իրենց կատարած աշխատանքով,
այն կազմակերպության կարծիք-գնահա-
տականն ստանալուց հետո, վորտեղ աշխա-
տել և կամ աշխատում ե ընդունվողը:

Թեկնածուներից կուսակցության անդամ
ընդունելու կարգը հետեւյալն ե.

ա) Սահմանվում է չորս կատեգորիա՝
1) վոչ պակաս քան 5 տարվա արտադրական
ստաժ ունեցող արդյունաբերական բան-
վորները. 2) 5 տարուց պակաս արտադրա-
կան ստաժ ունեցող արդյունաբերական
բանվորներ, դյուղատնտեսական բանվոր-
ներ, բանվորների ու կոլտնտեսականների
շարքերից յելած կարմիր-բանակայիններ
և անմիջականնորեն ցեխում կամ աշխատա-
մասում աշխատող ինժեներ-տեխնիկական
աշխատողներ. 3) կոլտնտեսականներ, տնայ-
նագործական-արհեստագործական արտե-
ների անդամներ և տարրական դպրոցի ու-
սուցիչներ. 4) մնացած ծառայողները:

բ) Կուսակցության մեջ ընդունվելու հա-
մար առաջին կատեգորիային պատկանող
անձերը ներկայացնում են կուսակցական
հնգամյա ստաժ ունեցող կուսանդամների
յերեք յերաշխավորություն. յերկրորդ կա-
տեգորիային պատկանող անձերը—կուսակ-
ցական հնգամյա ստաժ ունեցող կուսան-

դամների հինգ յերաշխավորություն։ յեր-
ռորդ կատեգորիային պատկանող անձերը—
կուսակցական հնդամյա ստաժ ունեցող
կուսանդամների հինգ յերաշխավորություն
և ՄՏ կայանի քաղբաժնի կամ ըլջկոմի ներ-
կայացուցչի յերաշխավորությունը. չորրորդ
կատեգորիային պատկանող անձերը—տաս-
նամյա կուսատաժ ունեցող կուսանդամների
հինգ յերաշխավորություն։

Ծանոթություն. —Կոմյերիտմիությունից
կուսակցության անդամ ընդունելիս՝ բո-
լոր կատեգորիաների համար Համլկօթելլ
Ալանային կոմիտեյի յերաշխավորությու-
նը հավասարեցվում է կուսակցության
յերկու անդամի յերաշխավորության։

Դ) Սյլ կուսակցություններից յելածներն
ընդունվում են բացառիկ գեպքերում՝ կու-
սակցության հինգ անդամի յերաշխավորու-
թյամբ, վորոնցից յերեքը տասը տարվա
կուսատաժով, իսկ յերկուսը՝ մինչհեղափո-
խական կուսատաժով, վոչ այլ կերպ, քան
արտադրական ոկրնական կազմակերպու-
թյան միջոցով, անպայման Համկ(բ)կ

կենտկոմի հաստատումով, անկախ ընդուն-
վողի սոցիալական գրությունից։

Ծանոթություն. —կենտկոմը կարող է
այլ կուսակցություններից յելածներին
վերջնականապես կուսակցության անդամ
հաստատելու իրավունքը տալ առանձին
յերկրային և մարզային կուսակցական
կոմիտեներին և ազգային կոմկուսների
կենտկոմներին։

դ) Յերաշխավորությունների ստուգումը
նախորդում է ընդունելությանը և կազմում
է տեղական կուսակցական կոմիտեյի պար-
տականությունը։

Ե) Կուսակցության մեջ ընդունելու հար-
ցը նախապես քննում է սկզբնական կու-
սակցական կազմակերպությունը, վճռում է
կազմակերպության ընդհանուր ժողովը և
ուժի մեջ և մտնում առաջին ու յերկրորդ
կատեգորիաների համար՝ ըլջկոմի կամ
քաղկոմի հաստատումից հետո, իսկ յեր-
ռորդ և չորրորդ կատեգորիաների համար՝
մարզկոմի, յերկրկոմի կամ ազգային կոմ-
կուսի կենտկոմի հաստատումից հետո։

զ) Եինչեւ քսան տարեկան ներառյալ յերթասարդները կուսակցության մեջ մըտնում են միայն ՀամեկօթեՄ-ի միջոցով:

4. Յերաշխավորները պատասխանատու յեն իրենց յերաշխավորյալների համար և անհիմն յերաշխավորություն տված լինելու դեպքում յենթարկվում են կուսակցական տույժերի՝ ընդհուպ մինչեւ կուսակցությունից վտարելը:

5. Թեկնածուներից կուսակցության անդամ ընդունվողների կուսակցական ստաժը հաշվում ե այն որից, յերբ համապատասխան կուսակցական սկզբնական կազմակերպության ընդհանուր ժողովը վորոշում ե ընդունում տվյալ ընկերոջը կուսակցության անդամ հաստատելու մասին:

6. Մի կազմակերպության ամեն մի անդամ մի ուրիշ կազմակերպության աշխատանքի շրջանը տեղափոխվելու դեպքում վերջինիս կողմից մտցվում ե իր անդամների թվի մեջ:

Ծանոթություն.—կուսակցության անդամների՝ մի կազմակերպությունից

մյուսը վորխադրվելը տեղի յէ ունենում Համեկ(բ)կ կենտկոմի սահմանած կանոնների համաձայն:

7. Կուսակցության այն անդամներն ու թեկնածուները, վորոնք յերեք ամսվա ընթացքում առանց հարգելի պատճառների չեն վճարել անդամավճարները, համարվում են կուսակցությունից դուրս մնացած, և այդ մասին հայտնվում ե սկզբնական կազմակերպության անդամների ընդհանուր ժողովին:

8. Վորևե մեկին կուսակցությունից վտարելու հարցը վորոշում ե այն կազմակերպության ընդհանուր ժողովը, վորի անդամն ե տվյալ անձնավորությունը, և առաջն ու յերկրորդ կատեգորիաների համար հաստատում ե մարզային կամ յերկրային կոմիտեն, իսկ յերրորդ և չորրորդ կատեգորիաների համար՝ շրջանային կամ քաղաքային կոմիտեն, ըստ վորում տվյալ անձնավորությունը կուսակցական կազմակերպության ընդհանուր ժողովի կամ կուսակցական կոմիտեյի կողմից վտարվելու որից

Հեռացվում ե կուսակցական աշխատանքից :
Կուսակցությունից վտարված անդամների
մասին հրապարակվում ե կուսակցական
մամուլում, վտարման պատճառի մատնա-
նչումով :

9. Համկ(բ)կ Կենտկոմի պարբերական
վորոշումներով կատարվում են զտումներ՝
կուսակցությունը սիստեմատիկ կերպով
մաքրելու համար՝

դասակարգայնորեն խորթ և թշնամի
տալ ըերից .

յերկերեսանիներից, վորոնք խարում են
կուսակցությանը, թարգնում են նրանից ի-
րենց իսկական հայացքները և վիճեցնում են
կուսակցության քաղաքականությունը .

կուսակցության ու պետության յերկաժե
կարգապահությունը բացահայտ կամ քո-
ղարկված ձևով խախտողներից .

բուրժուական տարրերի հետ սերտաճող
վերասերվածներից .

կարիերիստներից, մորթապաշտներից և
բյուրոկրատացած տարրերից .

բարյապես քայլարվածներից, վորոնք ի-
92

րենց անվայելուչ վարքագծով դրուի են
կուսակցության արժանապատվությունը,
արատավորում են կուսակցության դրու-

պասսիվներից, վորոնք չեն կատարում
կուսակցության անդամի պարտականու-
թյունները և չեն յուրացրել կուսակցության
ծրագիրը, կանոնադրությունը և կարեորա-
գույն վորոշումները :

11. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

10. Կուսակցության մեջ մտնել ցանկացող
բոլոր անձերը անցնում են թեկնածուական
ստաժ, վորի նպատակն ե նրանց հիմնավո-
րապես ծանոթացնել կուսակցության ծրա-
գրին, կանոնադրությանն ու տակտիկային
և ստուգել թեկնածուի անձնական հատկու-
թյունները :

11. Թեկնածու ընդունելու կարգը (կատե-
գորիաների բաժանելը, յերաշխավորու-
թյունների բնույթը և նրանց ստուգումը,
կազմակերպության վորոշումը՝ ընդունե-

լության մասին և կուսկոմի կողմից հաստատվելը՝ բոլորովին նույնն եւ, ինչ վոր կուսակցության անդամ ընդունելիս:

12. Թեկնածուական ստաժ սահմանվում եւ առաջին կատեգորիայի համար մի տարի, յերկրորդ, յերրորդ և չորրորդ կատեգորիաների համար՝ յերկու տարի:

Ծանոթություն. —Այլ կուսակցություններից յելածները, անկախ իրենց սոցիալական զրությունից, անցնում են թեկնածուական յեռամյա ստաժ:

13. Կուսակցության անդամության թեկնածուները մասնակցում են այն կաղմակերպության ժողովներին, վորին նրանք պատկանում են, խորհրդակցական ձայնի իրավունքով:

14. Թեկնածուները մուծում են սովորական անդամավճար տեղական կուսակցական կոմիտեյի դրամարկելը:

III. ՀԱՍՏԱՐՈՂՆԵՐԻ ԽՄԲԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

15. Կուսակցությանն ամենամուտ անկուսակցական ակտիվիտաներին, վորոնք դոր-

ծովարտադրության մեջ ցույց են տվել իրենց նվիրվածությունը կուսակցությանը, բայց դեռ նախապատրաստված չեն կուսակցության մեջ ընդունվելու համար, Համ. Կ(ր)Կ շուրջը կազմակերպելու նպատակով՝ սկզբնական կուսակցական կաղմակերպություններին կից ստեղծվում են ՀամԿ(ր)Կ համակրողների խմբակներ, վորոնք անպայման յեթարկվում են կուսակցության որդանների բոլոր վորոշումներին:

16. Համակրողների խմբակների մեջ ընդունելությունը կատարվում է գործարանային, հիմնարկային և այլ կուսակցական կոմիտեների, ՄՏ կայանների, խորհտնոտեսությունների և յերկաթուղային տրանսպորտի քաղաքացինների վորոշումներով, կուսակցության յերկու անդամի յերաշխավորությամբ:

17. ՀամԿ(ր)Կ համակրողների խմբակներում կաղմակերպվածները պարտավոր են հաճախել բոլոր կուսակցական դոնքաց ժողովները, վորաեղ նրանք ոգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով, ակտի-

վորեն պայքարել կուսակցության և կառավարության վորոշումների կատարման համար, կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ սիստեմատիկ կերպով աշխատել իրենց դադարական-քաղաքական մակարդակը բարձրացնելու համար:

IV. ԿոհՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ

18. Կուսակցության կազմակերպական կառուցվածքի ղեկավար սկզբունքը դեմոկրատական ցենտրալիզմն է, վորը նշանակում է՝

ա) վերից վար՝ կուսակցության բոլոր ղեկավար որդանների ընտրականությունը.

բ) կուսակցական որդանների պարբերական հաշվետվությունն իրենց կուսակցական կազմակերպությունների առաջ.

գ) կուսակցական խիստ կարգապահություն և փոքրամասնության յենթարկվելը մեծամասնության.

դ) բարձրագույն որդանների վորոշումների անպայման պարտադիր լինելը ստորին որ-

դանների և կուսակցության բոլոր անդամների համար:

19. Կուսակցությունը կառուցվում է դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքներով տերիտորիալ-արտադրական հատկանիւթիւնով վորեւել ըրջան սպասարկող կազմակերպությունը վերադար և համարվում տվյալ պատճեններով կազմակերպության մասն սպասարկող բոլոր կաղաքական մասների նկատմամբ, կամ վորեւել արտադրության կամ կառավարչության մի մասն սպասարկող բոլոր կաղաքական մասների նկատմամբ, կամ վորեւել արտադրության կամ կառավարչության մասն սպասարկող կաղաքական մասների նկատմամբ:

20. Կուսակցական բոլոր կազմակերպություններն ավտոնոմ են տեղական հարցերը լուծելիս, վորչափով այդ վորոշումները չեն հակասում կուսակցության վորոշումներին:

21. Յուրաքանչյուր կազմակերպության բարձրագույն ղեկավար որդանն և ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան կամ համագումարը:

22. Ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան

կամ համագումարն ընտրում են կոմիտե, վորը նրանց գործադիր որդանն եւ և զեկա-վարում եւ կազմակերպության ամբողջ ըն-թացիկ աշխատանքը :

23. Կուսակցության կազմակերպման սխեման հետեւյալն եւ՝

ա) ԽՍՀՄ տերիտորիա—Համամիութենա-կան համագումար—Համկ(ր)կ կենտկոմ.

բ) մարզեր, յերկիրներ, հանրապետու-թյուններ—մարզային, յերկրային կոնֆե-րենցիաներ, ազգային կոմիունների համա-գումարներ—մարզկոմներ, յերկրուժներ, ազգային կոմիունների կենտկոմներ.

գ) քաղաքներ, ըրչաններ—քաղաքային ու ըրջանային կոնֆերենցիաներ—քաղաքային ու ըրջանային կոմիտեներ.

դ) ձեռնարկություններ, գյուղեր, կու-տնտեսություններ, ՄՏ կայաններ, վար-ժեր-բանակային զորամասեր, հիմնարկներ—սկզբնական կուսակցական կազմակերպու-թյունների ընդհանուր ժողովներ, կոնֆե-րենցիաներ—սկզբնական կուսակցական կո-միտեներ (գործարանային կուսկոմիտե,

ֆաբրիկային կուսկոմիտե, կարմիր-բանա-կային զորամասի կուսբյուրո և այլն) :

24. Յենթարկման, հաշվետվության, կու-սակցական վորոշումների ընթացքի ու վե-ճարկման կարգը (վերադաս ինստանցիայից գետի ստորին ինստանցիա)՝ Համամիութե-նական համագումար, Համկ(ր)կ կենտկոմ, մարզային-յերկրային կոնֆերենցիա, ազ-գային կոմիունների կոնֆերենցիա կամ համագումար, մարզային, յերկրային կոմի-տե, ազգային կոմիունի կենտկոմ, քաղա-քային—ըրջանային կոնֆերենցիա, քաղա-քային—ըրջանային կոմիտե և այլն:

25. Կուսակցական դիրեկտիվներն ու վո-րոշումներն իրագործելու (և խորհրդային-տնտեսական որդաններում ու ստորին կուս-կազմակերպություններում դրանց կատա-րումն ստուգելու) նպատակով դրանական համար՝ մարզկոմ-աշխատանք կատարելու համար՝ մարզկոմ-ներում, յերկրկոմներում, ազգային կոմ-կուսների կենտկոմներում և Համկ(ր)կ կենտկոմում ստեղծվում են ամբողջական արտադրական-ճյուղային բաժիններ :

Համկ(բ)կ կենտկոմում՝

ա) Գյուղատնտեսական, բ) Արդյունաբերական, գ) Տքանասպորտային, դ) Պլանային-Փինանսա-առևտրական, ե) Քաղաքական-վարչական, զ) Ղեկավար կուսորդանների, է) Կուլտուրայի և լենինիդմի պրոպագանդի, ը) Մարքսի-Ենդելի-Լենինի ինստիտուտ (ինչպես և 2 անկտոր՝ Գործերի կուսակարչության և Հատուկի):

Մարդկոմներում—յերկրկոմներում և աղողային կոմկուսների կենտկոմներում՝

ա) Գյուղատնտեսական, բ) Արդյունաբերական-արանսպորտային, գ) Խորհրդային-առևտրական, դ) Կուլտուրայի և լենինիդմի պրոպագանդի, ե) Ղեկավար կուսորդանների (քաղաքային ու շրջանային) և Հատուկ սեկտոր:

Յուրաքանչյուր արտադրական-ճյուղային բաժնում կենտրոնացվում եւ տվյալ ճյուղի ամբողջ աշխատանքը՝ կազմակերպական-կուսակցական աշխատանք, կադրերի բաշխում ու պատրաստում, ադիտ-մասսայա-

կան աշխատանք, արտադրական պլրոպագանդ, հսկողություն համապատասխան խորհրդային-տնտեսական որդգանների և կուսակցական կազմակերպությունների կողմից կուսակցական վորոշումները կատարելու վրա:

26. Կուսակցության յուրաքանչյուր կազմակերպություն վերջնականապես հաստատվելուց հետո իրավունք ունի ունենալու իր կնիքը, բայց միամիայն համապատասխան վերապատճեն կուսակցական կազմակերպության սանկցիայով:

V. Կուսակցության կենտրոնական կազմակերպությունների ՄԱՍԻՆ

● 27. Կուսակցության գերազույն որդանը համապատամարն եւ : Հերթական համագումարները հրավիրվում են վոչ ուշ, քան յերեք տարին մի անգամ : Արտակարգ համագումարները հրավիրվում եւ կենտրոնական կոմիտեն սեփական նախաձեռնությամբ կամ կուսակցական վերջին համագումարում ներկայացված անդամների ընդհանուր թվի

առնվազն մի յերբորդի պահանջով։ Կուսակցական համագումարի հրավիրումը և որակարդը հայտարարվում ե վոչուշ, քան համագումարից մեկ ու կես ամիս առաջ։ Արտակարգ համագումարները հրավիրվում են յերկու ամսվա ժամանակամիջոցում։

Համագումարը վավերական ե համար-
գում, յեթե նրանում ներկայացված ե վեր-
ջին հերթական համագումարում ներկա-
յացված՝ կուսակցության բոլոր անդամնե-
րի կեսից վոչ պահապար։

Կուսակցության համագումարի ներկա-
յացուցչության նորմաները սահմանում ե
կենտրոնական կոմիտեն։

28. Այն դեպքում, յերբ կենտրոնական
կոմիտեն 27-րդ կետում մատնանշված ժա-
մանակամիջոցում չհրավիրի արտակարդ
համագումար, արտակարգ համագումարի
հրավիրումը պահանջող կազմակերպու-
թյուններն իրավունք ունեն ստեղծելու
կազմակերպական կոմիտե, վորոն ողափում
և կենտրոնական կոմիտեի իրավունքներով

արտակարգ համագումար հրավիրելու հար-
ցում։

29. Համագումարը՝

ա) լսում և հաստատում ե կենտրոնական
կոմիտեի, կուսակցական վերահսկողու-
թյան Հանձնաժողովի, կենտրոնական վեր-
ստուգիչ Հանձնաժողովի և այլ կենտրոնա-
կան կազմակերպությունների հաշվետվու-
թյունները։

բ) վերանայում և փոփոխում ե կուսակ-
ցության ծրագիրն ու կանոնադրությունը։

գ) վորոշում ե կուսակցության տակտի-
կական գիծն ընթացիկ քաղաքականության
հիմնական հարցերի վերաբերյալ։

դ) ընտրում ե կենտրոնական կոմիտե,
կուսակցական վերահսկողության Հանձ-
նաժողով, կենտրոնական վերստուգիչ
Հանձնաժողով և նշում է Խորհրդային վե-
րահսկողության Հանձնաժողովի կազմը՝
ԽՍՀՄ կենտրոնական կոմիտե և ժողովրդի հաստատմանը ներկայացնելու համար։

30. Կենտրոնական կոմիտեն և մյուս
կենտրոնական կազմակերպություններն

ընտրվում են համագումարի սահմանած կազմով։ Կենտրոնական կոմիտեի անդամների հեռանալու դեպքում Կենտկոմի կազմը լրացվում է համագումարի ընտրած թեկնածուներից՝ համագումարի սահմանած կարգով։

31. Կենտրոնական կոմիտեն առնվազն մի պլենար նիստ և ունենում 4 ամիսը մեկ անգամ։ Կենտկոմի անդամության թեկնածուները Կենտկոմի պլենումների նիստերին ներկա յեն լինում խորհրդակցական ձայնի իրավունքով։

32. Կենտրոնական կոմիտեն կազմակերպում է քաղաքական աշխատանքի համար—Քաղաքական բյուրո, կազմակերպական աշխատանքի ընդհանուր զեկալվարման համար—Կազմակերպական բյուրո և կազմակերպական ու դործադիր բնույթ կրող ընթացիկ աշխատանքի համար—Քարտուղարություններ։

33. Կենտրոնական կոմիտեն համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում զեկալվարում և կուսակցության ամբողջ

աշխատանքը, ներկայացնում և կուսակցությունը՝ այլ կուսակցությունների, կազմակերպությունների և հիմնարկների հետ ունեցած հարաբերություններում, կազմակերպության զանազան հիմնարկներ և զեկալվարում և նրանց գործունեցությունը, նշանակում և կենտրոնական որդաններությունը, վորոնք աշխատում են նրա վերահսկողությամբ, և հաստատում և տեղական խոչոր կազմակերպությունների կուսակցական որդանների խմբագիրներին, կազմակերպում և զեկալվարում և հասարակական նշանակություն ունեցող ձեռնարկությունները, բաշխում և կուսակցության ուժերն ու միջոցները և վարում և կենտրոնական դրամարկղը։

Կենտրոնական կոմիտեն ուղղություն և տալիս կենտրոնական խորհրդային և հասարակական կազմակերպությունների աշխատանքին՝ նրանցում յեղած կուսակցական խմբագիրների միջոցով։

34. Բոլշևիկյան զեկալվարությունն ու

քաղաքական աշխատանքն ուժեղացնելու
նպատակով, Կենտրոնական Կոմիտեն իրա-
վունք ունի ստեղծել քաղաքական բաժին-
ներ և ջոկել Կենտրոմի կուսակցական կազ-
մակերպիչներ սոցիալիստական շինարա-
րության հետ մնացող այն ճակատամասե-
րում, վորոնք առանձնապես կարևոր նշա-
նակություն են ստանում ժողովրդական
տնտեսության ու ամբողջ յերկրի համար,
ինչպես նաև, յերբ քաղաքական բաժինները
կատարում են իրենց հարվածային խնդիր-
ները՝ վերածել դրանք արտադրական-տե-
րիտորիալ հատկանիշով կառուցված սովո-
րական կուսակցական որդանների:

Քաղաքիններն այսատում են համապա-
տասխան արտադրական կուսակցական կո-
միտեների իրավունքներով և ղեկավարվում
են անմիջականորեն Համկ(բ)կ Կենտրոմի
կողմից Կենտրոմի արտադրական-ճյուղա-
յին բաժինների միջոցով, կամ հատկապես
կաղմակերպված քաղվարչությունների ու
քաղսեկուրների միջոցով:

35. Կենտրոնական Կոմիտեն պարբերա-

բար իրազեկ և դարձնում կուսակցական
կազմակերպություններին իր աշխատանքի
մասին:

36. Կուսակցական Վերահսկողության
Հանձնաժողովը՝

ա) վերահսկում և կուսակցության և
Համկ(բ)կ Կենտրոմի վորոշումների կա-
տարմանը.

բ) պատասխանատվության և կանչում
կուսակցական կարգավահությունը խախ-
տող մեղավորներին,

գ) պատասխանատվության և կանչում
կուսակցական ետիկան խախտող մեղավոր-
ներին:

37. Կենտրոնական Վերստուգիչ Հանձ-
նաժողովը վերստուգում և՝ ա) դործերի
ընթացքի արագությունն ու ճշտությունը
կուսակցության կենտրոնական որդաննե-
րում և Համկ(բ)կ Կենտրոմի Քարտուղա-
րության ապարատի կանոնավորությունը.
բ) Համկ(բ)կ Կենտրոմի դրամարկղը և
ձեռնարկությունները:

VI. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

ՑԵՐԿՎԱՅԻՆ—ՄԱՐԶԱՅԻՆ—ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

38. Մարզային—յերկրային—հանրապետական կուսակցական կազմակերպության բարձրագույն որդանն և մարզային—յերկրային կուսակցական կոնֆերենցիան կամ ազգային կոմիտսի համագումարը, իսկ դրանց մեջև ընկած ժամանակամիջոցում՝ մարզային—յերկրային կոմիտեն, ազգային կոմիտսի կենտրոնը։ Իրենց գործունեության մեջ նրանք զեկավարվում են Համամիութենական կոմունիստական կուսակցության և նրա զեկավար որդանների ընդհանուր վորոշումներով։

39. Հերթական յերկրային—մարզային կոնֆերենցիա կամ ազգային կոմունիստական կուսակցությունների համագումար հրավիրում և յերկրային—մարզային կոմիտե—ազգային կոմիտսի կենտրոնը՝ մեկու կես տարին մի անգամ, իսկ արտակարդ կոնֆերենցիան կամ համագումարը հրա-

վիրվում է յերկրային—մարզային կոմիտե—յի—ազգային կոմիտսի կենտրոնի վորոշմամբ կամ մարզի—յերկրի—հանրապետության մեջ մտնող կազմակերպությունների անդամների ընդհանուր թվի մի յերրորդի պահանջով։

Յերկրային—մարզային կոնֆերենցիայի, ազգային կոմիտսի համագումարի ներկացուցչության նորմաները սահմանում են յերկրային—մարզային կոմիտեն—ազգային կոմիտսի կենտրոնը։

Յերկրային—մարզային կոնֆերենցիան, ազգային կոմիտսի համագումարը լսում ու հաստատում է յերկրային—մարզային կոմիտեի—ազգային կոմիտսի կենտրոնի, վերստուգիչ հանձնաժողովի և յերկրային ու մարզային այլ հիմնարկների հաշվետուղերուցումները, քննարկում է յերկրի—մարզի կամ հանրապետության կուսակցական, խորհրդային, տնտեսական, արհմիկան, խորհրդային, տնտեսական, արհմիկային աշխատանքի հարցերը և ընտական աշխատանքի հարցերը և կոմիտե (հանրապետություններում՝ ազգային կոմ-

կուսի Կենտկոմ), Վերստուգիչ Հանձնառ
ժողով և կուսակցության Համամիութենա-
կան համադումարի պատգամավորներ:

40. Յերկրային—մարզային կոմիտեն,
իսկ Հանրապետություններում՝ ազգային
կոմկուսի Կենտկոմը, ընթացիկ աշխատան-
քի համար ընտրում ե Համապատասխան
դործադիր որպաններ՝ 11 հոգուց վոչ ավե-
լի կազմով, զորոնք հաստատվում են
Համկ(բ)կ Կենտկոմի կողմից, և յերկու
քարտուղար՝ առաջին և յերկրորդ: Քար-
տուղարների համար պարտադիր ե առնվա-
զըն 12 տարբա կուսակցական ստաժ:

41. Յերկրային—մարզային կոմիտեն—
ազգային կոմկուսի Կենտկոմը կազմակեր-
պում ե կուսակցության զանազան հիմ-
նարկներ՝ յերկրի—մարզի—Հանրապետու-
թյան սահմաններում, զեկավարում և
նրանց դործունեցությունը, նշանակում և
յերկրային—մարզային կուսակցական որ-
դանի խմբագրությունը, վորն աշխատում
ե նրա վերահսկողության տակ, զեկավա-
րում ե արտակուսակցական կազմակերպու-

թյուններում յեղած կուսակցական խմբե-
րը, կազմակերպում և ղեկավարում ե իր
այն ձեռնարկությունները, վորոնք ընդհա-
նուր նշանակություն ունեն մարզի—յերկ-
րի—հանրապետության համար, իր կաղմա-
րի կերպության սահմաններում քաշիում և
կուսակցության ուժերն ու միջացները և
վարում ե յերկրային—մարզային—հանրա-
պետական կուսակցական դրամարկվու:

42. Յերկրային—մարզային կոմիտեյի—
ազգային կոմկուսի Կենտկոմի պլենումը
հրամիրվում ե առնվազն յերեք ամիսը մեկ
անգամ:

43. Յերկիրների ու Հանրապետություն-
ների կաղմի մեջ մտնող աղբային և այլ
մարզերի ու ինքնավար Հանրապետություն-
ների կուսակցական կարգակերպություն-
ներն աշխատում են յերկրային կոմիտենե-
րի—ազգային կոմկուսների կենտկոմների
զեկավարությամբ և իրենց ներքին կյոն-
քում զեկավարվում են այն գուությներով,
վոր շարադրված են կուսակցության կանո-
նադրության VI գլուխում յերկրային, մար-

զային և հանրապետական կազմակերպությունների ժամանակ:

(VII. Կոնսագրության բառափաթին ՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ)
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

44. Քաղաքային—ըրջանային կուսակցական կոնֆերենցիան հրավիրվում է քաղաքային—ըրջանային կոմիտեյի կողմից վոչ պակաս, քան տարեկան մի անգամ, արտակարգ կոնֆերենցիան՝ քաղաքային—ըրջանային կոմիտեյի վորոշումով կամ քաղաքային—ըրջանային կազմակերպության մեջ մտնող կազմակերպությունների անդամների ընդհանուր թվի մի յերրորդի պահանջով:

Քաղաքային—ըրջանային կոնֆերենցիան լսում է հաստատում է քաղաքային—ըրջանային կոմիտեյի, վերստուգիչ հանձնաժողովի ու քաղաքային—ըրջանային այլ հոմնարկների հաշվետվությունները, ընտրում է քաղաքային—ըրջանային կոմիտե, վերստուգիչ հանձնաժողով և յերկրային—մար-

զային կոնֆերենցիայի կամ ազգային կոմիտսի համագումարի պատգամավորներ:

45. Քաղաքային կոմիտեյի քարտուղարի համար պարտադիր է տասնամյա կուսակցական ստաժ, իսկ ըրջանային կոմիտեյի քարտուղարի համար՝ յոթնամյա կուսակցական ստաժ: Քաղաքային և ըրջանային կոմիտեների քարտուղարներին հաստատում է մարզկոմը, յերկրկոմը կամ ազգային կոմիտսի կենտրամը:

46. Քաղաքային—ըրջանային կոմիտեն ընտրում է 5—7 հոգուց բաղկացած բյուրո, կտղմակերպում ու հաստատում է սկզբնական կուսակցական կազմակերպությունները ձեռնարկություններում, խորհանութեանություններում, ՄՏԿայաններում, կոլտնտեսություններում և հիմնարկներում, վարում է բոլոր կոմունատների ցուցակագրումը, կազմակերպում է կուսակցության գանգական հիմնարկներ քաղաքի ու ըրջանի ասհմաններում և զեկավարում է նրանց գործունեյությունը, նշանակում է քաղաքային—ըրջանային կուսակցական որդանի

Խմբագրին, վորն աշխատում ե նրա ղեկա-
վարությամբ ու վերահսկողությամբ, դե-
կավարում ե արտակուսակցական կազմա-
կերպությունների կուսակցական խմբակնե-
րին, կազմակերպում ե համաքաղաքային,
շրջանային նշանակություն ունեցող իր
ձեռնարկությունները, քաղաքի և շրջանի
սահմաններում բաշխում ե կուսակցու-
թյան ուժերն ու միջոցները և վարում ե
քաղաքային—շրջանային դրամարկղը: Քա-
ղաքային—շրջանային կոմիտեն յերկրա-
յին—մարզային կոմիտեյին—ազգային կոմ-
կուսի կենտրոնին հաշվետվություն և ներ-
կարացնում իր գործունելության մասին՝
Համկ(բ)կ կենտրոնի սահմանած ժամկետ-
ներում և ձևով:

47. Խոչոր քաղաքներում Համկ(բ)կ
կենտրոնի թույլավությամբ ստեղծվում են
քաղաքային կոմիտեյին յենթակա ույունա-
կան կազմակերպություններ :

VIII. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

48. Կուսակցության հիմքն են կազմում
սկզբնական կուսակցական կազմակերպու-
թյունները: Սկզբնական կուսակցական
կազմակերպություններն ստեղծվում են
ֆարբիկաններում, գործարաններում, խորհու-
տնտեսություններում և տնտեսական այլ
ձեռնարկություններում, կոլտնտեսություն-
ներում, ՄՏ կայաններում, կարմիր-բանա-
կային զորամասերում, գյուղերում, հիմ-
նարկներում և այլն, յերբ կա կուսակցու-
թյան առնվազն յերեք անդամ: Այն ձեռ-
նարկություններում, կոլտնտեսություննե-
րում, հիմնարկներում և այլն, վորտեղ
կուսակցության անդամների թիվը յերեքից
սղակա ե, ստեղծվում են թեկնածուական
կամ կուսակցական-կոմիտեի նմբեր,
վորոնց գլխավորում ե շրջկոմների, քաղ-
կոմների կամ քաղաքինների կողմից ջոկ-
ված կուսակցմակերպությունները: Սկզբնական կու-
սակցական կազմակերպությունները հաս-

տատում են շրջանային կամ քաղաքային կոմիտեները կամ համալսարանական քաղաքաժինները :

49. Առաջոր ձեռնարկություններում, հիմնարկներում, կոլտնտեսություններում և այլն, վորոնք ունեն մեծ թվով կոմունիստներ (100 անդամից մինչև 3000 և ավելի), ամբողջ ձեռնարկությունը, հիմնարկը և այն ընդգրկող ընդհանուր սկզբնական կուսակցական կազմակերպության ներսում, յուրաքանչյուր առանձին դեպքում՝ ըրջկոմի—քաղկոմի կամ համապատասխան քաղրաժնի հաստատմամբ՝ կարող են կազմակերպվել կուսակցական կազմակերպություններ ըստ ցեսերի, աշխատամասերի, բաժինների և այլն։ Ցեսային, աշխատամասային և այլ կազմակերպությունների ներսում իրենց հերթին կարող են ստեղծվել կուսակցական խմբակներ՝ ըստ ձեռնարկության բրիգադների, ադրեգատների և այլն։

50. Սկզբնական կուսակցական կազմակերպությունը բանվորական և գյուղացիա-

կան միասսաներին կապում և կուսակցության զեկավար որպանների հետ։ Նրա ինդիբոն եւ

1) ագիտացիոն և կազմակերպական աշխատանք կատարել մասսաների մեջ հանուն կուսակցության լողուրդների ու վորոշումների.

2) դրավել համակրողներ ու նոր անդամներ և նրանց տալ քաղաքական դաստիարակություն։

3) ոժանդակել ըրջկոմին—քաղկոմին կամ քաղրաժնին՝ նրա ամենորյա կազմակերպական և աղիտացիոն աշխատանքում։

4) մորթիլդացիայի յենթարկել մասսաներին ձեռնարկություններում, խորհունտեսություններում, կոլտնտեսություններում և այլն՝ կատարելու արտադրական սլանը, ամրացնելու աշխատանքային կարգապահությունը և զարգացնելու հարվածայնությունը։

5) պայքար մղել ձեռնարկություններում, խորհունտեսություններում, կոլտընտեսություններում թափթվածության և

կործն անտնտեսաբար վարելու դեմ, ամենորյա հողատարություն ցույց տալ բան-վորների ու կուսնտեսականների կենցաղա-յին պայմանները բարելավելու համար.

6) Վորպես կուսակցական որգան՝ ակտիվ կերպով մասնակցել յերկրի քաղաքական ու տնտեսական կյանքին:

51. Ընթացիկ աշխատանքը վարելու համար սկզբնական կուսակցական կազմակերպություններում եւ կուսակցական կոմիտե (Փարկուսակոմ, դործկուսակոմ և այլն) 11 հոգուց վոչ ավելի կազմով, մի տարի ժամանակով, իսկ ցեխային կազմակերպություններում եւ կուսակցական կազմակերպիչ, վորին հաստատում եւ սկզբնական կուսակցական կոմիտեն:

15 հոգուց պակաս անդամ և թեկնածու ունեցող կուսակցական կազմակերպություններում կուսակցական կոմիտեներ չեն ստեղծվում, այլ ընտրվում են կուսակցական կազմակերպիչներ:

Սկզբնական կուսակցական կոմիտեն-ում, վորոնք միավորում են կուսակցու-

թյան վոչ ավելի քան 100 անդամ, կուսակցական աշխատանքը վարում են, վորպես կանոն, արտադրության մեջ աշխատելուց չազատված աշխատողները: Մինչև 1000 կուսանդամ ընդգրկող կուսակցական կոմիտեներում պետք է աշխատեն արտադրության մեջ աշխատելուց ազատված 2—3 վճարովի աշխատողները: Մինչև 3000 և ավելի անդամ ընդգրկող կուսակցակերպում կարող են աշխատել արտադրությունից ազատված 4—5 ընկերներ:

Սկզբնական կուսակցական կոմիտեների քարտուղարների համար պարտադիր ե առավագն 3-ամյա կուսակցական ստաժ, իսկ կուսակազմակերպիչների համար՝ 2-ամյա կուսակցական ստաժ:

IX. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

52. Կարմիր բանակի, Կարմիր նավատորմի և ավելիացիայի կուսակցական աշխատանքի ընդհանուր ղեկավարությունն իրագործում ե ԲԳԿԲ Քաղաքական վարչու-

թյունը, վորն աշխատում և չամկ(բ)կ
կենտկոմի ռազմական բաժնի իրավունքով:
Բգկի Քաղվարչությունն իր ղեկավարու-
թյունը կենաւդործում և իր կողմից նշա-
նակվող քաղբաժինների, զինկոմների և
համապատասխան բանակային կոնֆերեն-
ցիաներում ընտրվող կուսակցական հանձ-
նաժողովների միջոցով:

Կարմիր բանակի, նաևլատորմի և ավեա-
ցիայի կուսակզմակերպություններն աշխա-
տում են չամկ(բ)կ կենտկոմի հաստատած
հատուկ հրահանգի հիման վրա:

53. Ոկուգների, նավատորմների ու բա-
նակի քաղբաժինների պետերի համար պար-
տադիր և 10-ամյա կուսակցական ստաժ,
դիվիզիաների ու բրիգադների քաղբաժին-
ների պետերի համար՝ 6-ամյա կուսակցա-
կան ստաժ:

54. Քաղորդանները սպարտավոր են սերտ
կապ պահպանել տեղական կուսակցական
կոմիտեների հետ՝ քաղորդանների ղեկա-
վարների և զինկոմների (քաղբաժինի գծով
ոգնականների) մշտական մասնակցությամբ

տեղական կուսակցական կոմիտեներում,
ինչպես նաև կուսկոմիտեներում քաղորդան-
ների պետերի և զինկոմների (քաղբաժական
գծով ոգնականների) ղեկուցումները ղորա-
մասերում կատարվող քաղաշխատանքի մա-
սին սխառեմատիկաբար լսելու միջոցով:

X. Արտակոնսկազմական Կազմակերպությունների Կոհուսակազմական ԽՄԲԵՐԻ ՄԱՍԻՆ

55. Արտակուսակցական խորհրդային,
արհմիութենական, կոոպերատիվ և այլ
մասսայական կազմակերպությունների բո-
լոր համագումարներում, խորհրդակցու-
թյուններում և ընտրովի որգաններում,
վորտեղ կա կուսակցության առաջազն յերեք
անդամ, կազմակերպվում են կուսակցական
խմբակներ, վորոնց խնդիրն ե բաղմակող-
մանիորեն ուժեղացնել կուսակցության աղ-
ղեցությունը և կիրառել նրա քաղաքակա-
նությունն արտակուսակցական միջավայ-
րում, ամրապնդել կուսակցական ու խոր-
հրդային յերկաթե կարգապահությունը,
սրայքար մղել բյուրոկրատիզմի դեմ, ստու-

գել կուսակցական ու խորհրդային դիրեկտիվների կատարումը:

Խումբն ընթացիկ աշխատանքի համար ընտրում ե քարտուղար :

56. Խմբերը, անկախ իրենց նշանակությունից, ամբողջովին յենթարկվում են համապատասխան կուսազմակերպություններին (Համկ(ր)կ կենտրոն, յերկրկոմ, մարզկոմ, ազգային կոմիտեի կենտրոն, քաղաքոմ, շրջկոմ): Խմբերը բոլոր հարցերում պարտավոր են խստիվ և անշեղ կերպով հետեւ կուսակցական դեկալար կազմակերպությունների վրոշումներին:

XI. ՆԵՐԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԿԱՐԳԱԿԱՆ ՍԱՍԻՆ

57. Կուսակցական քաղաքականության հարցերի աղատ և գործարար քննարկումն առանձին կազմակերպություններում կամ ամբողջ կուսակցության մեջ կուսակցության յուրաքանչյուր անդամի անկապտելի էրավունքն ե, վորը բղխում ե ներկուսակցական դեմոկրատիայից: Միմիայն ներկու-

սակցական դեմոկրատիայի հիման վրա հնարավոր ե ծավալել բոլշևիկյան ինքնաքննադատությունը և ամբացնել կուսակցական կարգավահությունը, վորը պետք ե լինի գիտակցական և վոչ մեխանիկական: Սակայն լայն դիսկուսիան, մանավանդ համամիտութենական մասշտաբի դիսկուսիան կուսակցական քաղաքականության հարցերի շուրջը, պետք ե այնպես կազմակերպված լինի, վոր նա չհանդեցնի աննշան վորքամասնության փորձերին՝ իր կամքը փաթթելու կուսակցության հսկա մեծամասնության վզին, կամ Փրակցիոն խմբավորումներ կազմակերպելու փորձերին, վորոնք ջանապարհության միասնությունը, պառակտում առաջացնելու փորձերին, վորոնք կարող են յերերել պրոլետարիատի գիտատուրայի ուժն ու տոկունությունը, ուրախություն պատճառելով բանվոր դասակարգի թշնամիներին: Ռաստի համամիտութենական մասշտաբի լայն դիսկուսիան կարող ե անհրաժեշտ համարվել միայն այն դեպքում, յեթե՝ ա) այդ անհրաժեշտու-

թյունն ընդունում են մարզային կամ հան-
րապետական մասշտաբի առնվազն միքանի
տեղական կուսկաղմակերպություններ,
բ) յեթե Կենտրոնի ներսում քավականաչափ
հաստատուն մեծամասնություն չկա կուսակ-
ցական քաղաքականության կարևորագույն
հարցերի շուրջը, գ) յեթե, չնայած Կենտ-
րոմում վորոշ տեսակետի վրա կանգնած
հաստատուն մեծամասնության դոյրության,
այնուամենայնիվ Կենտրոնը անհրաժեշտ և
համարում կուսակցության մեջ դիսկուսիոն
քննարկում կատարելու միջոցով առուղել իր
քաղաքականության ճիշտ լինելը։ Միմիայն
այս պայմանները կատարելու դեպքում կա-
րելի յե ապահովել կուսակցությունը՝ հա-
կակուսակցական տարրերի կողմից ներկու-
սակցական դեմոկրատիան չարարելուց,
միմիայն այդ պայմաններով կարելի յե
վստահ լինել, վոր ներկուսակցական
դեմոկրատիան ոգուա կրերի գործին և
չի ոգտագործվի ի վնաս կուսակցության ու
բանվոր դասակարգի։

58 Կուսակցության միասնության պահ-

պահումը, անողոք կոխվը Փրակցիոն պայ-
քարի ու պառակտման ամենաչնչին փորձերի
դեմ, կուսակցական ու խորհրդային խստա-
գույն կարգապահությունը հանդիսանում են
կուսակցության բոլոր անդամների, բոլոր
կուսակցական կազմակերպությունների ա-
ռաջնապույն պարտականությունը։

Կուսակցության մեջ և ամբողջ խորհրդա-
յին աշխատանքում խստ կարգապահու-
թյուն կիրառելու և ամեն տեսակ Փրակցիո-
նականության վերացումով առաջելագույն
միասնության հասնելու համար Համկ(բ)Կ
Կենտրոն իրավունք ունի՝ կարգապահու-
թյունը խախտելու կամ թե Փրակցիոնա-
կանությունը վերատեղելու կամ թույլ տա-
լու դեպքում՝ կիրառել կուսակցական տույ-
ժի բոլոր միջոցները, ընդհատվ մինչև կու-
սակցությունից վտարելը, իսկ Կենտրոնի
անդամների նկատմամբ՝ թեկնածուների
շարքը փոխադրելը և վրադես ծայրահեղ
միջոց՝ կուսակցությունից վտարելը; Կենտ-
րոնի անդամների, Կենտրոնի անդամության
թեկնածուների և կուսակցական վերահսկո-

ղության Հանձնաժողովի անդամների նկատմամբ այդպիսի ծայրահեղ միջոց կիրառելու պայմանը պետք է լինի Կենտկոմի պլենումի դուռմարումը, վորին հրավիրվում են Կենտկոմի անդամության բոլոր թեկնածուները և Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի բոլոր անդամները: Յեթե Կուսակցության ամենավատասխանատու ղեկավարների այդպիսի ընդհանուր ժողովը ձայների յերկու յերրորդով անհրաժեշտ կդանի Կենտկոմի կամ Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի անդամներին փոխադրել թեկնածուների շարքը կամ վտարել Կուսակցությունից, ապա այդ միջոցը պետք է իրագործվի անհապաղ:

59. Կուսակցական և խորհրդային կենտրոնների վրոշումները պետք է կատարվեն արագ ու ճշտիվ: Բարձրագույն կազմակերպությունների վրոշումները չկատարելու և կուսակցության հասարակական կարծիքով հանցավոր ճանաչված այլ դանցանքների հետևանքը կլինի—կազմակերպության համար՝ պարսավանք և ընդհանուր վերահաշ-

վառում (կազմակերպության ցըռումը), կուսակցության առանձին անդամների համար՝ պարսավանքի այս կամ այն ձևը (ի տես դեեւ, նկատողություն անեւ և այն), հրապարակային պարսավանք, ժամանակավորապես հեռացնել պատասխանատու կուսակցական և խորհրդային աշխատանքից, վտարել Կուսակցությունից, վտարել Կուսակցությունից՝ հաղորդելով դանցանքի մասին վարչական և դատական իշխանություններին:

60. Կուսակցության այն անդամները, վորոնք հրաժարվում են Կուսակցական Վերահսկողության Հանձնաժողովի հարցերին ձշորեն պատասխանելուց, պետք և անհապաղ վտարվեն կուսակցությունից:

XII. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ


61. Կուսակցության և նրա կազմակերպությունների դրամական միջոցները գոյանում են անդամավճարներից, կուսակ-

շության ձեռնարկությունների յեկամուտներից և այլ մուծումներից :

62. Կուսակցության անդամների և թեկնածուների համար սահմանվում են ամսական անդամականություններ, հետեւյալ չափով .

Մինչեվ 100 ր.	աշխատ.	ստացողն.	վճարում են—	պ. 20 կ.
101-ից 150 »	»	»	»	» 60 »
151-ից 200 »	»	»	»	» 1 ռ.— »
201-ից 250 »	»	»	»	» 1 ռ. 50 »
251-ից 800 »	»	»	»	» 2 ռ.— »
300-ից բարձր մինչեվ 500 ռ.	»	»	վաստակի 20/0	
500-ից »	»	»	»	3%/ ₀

63. Մուտքի վճարները գանձվում են թեկնածու ընդունվելիս՝ ստացվող աշխատավարձի 2 տոկոսի չափով :



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ	
Հրատարակության կողմից	3
Համամրուրենական կոմունիստական կուսակցության (բուժեվիկների) ծրագիրը	
Ներածություն	7
Ընդհանուր քաղաքական բնագավառում	22
Ազգային հարաբերությունների բնագավառում	34
Ռազմական բնագավառում	36
Դատական բնագավառում	40
Ժողովրդական լուսավորության բնագավառում	43
Կրոնական հարաբերությունների բնագավառում	47
Տնտեսական բնագավառում	49
Գյուղատնտեսության բնագավառում	54
Բաշխման բնագավառում	65
Փողային և բանկային գործի բնագավառում	67
Ֆինանսների բնագավառում	70
Բնակարանային հարցի բնագավառում	71
Աշխատանքի ստացածանության և սոցիալական ազգային գործառությունների մուտքագրություն	72
Համեմատական ծրագ. և կանոն.— 5	

Ժողովրդական առողջապահության բնագավառ-	
ում	78
Համամրութենական կոմունիստական (բոլեզիկների)	
կուսակցության կանոնադրությունը	
Ներածություն	83
I. Կուսակցության անդամների և նըտնց	
պարտականությունների մասին	84
II. Կուսակցության անդամության թեկնա-	
ծուների մասին	93
III. Համակրողների խմբակների մասին	94
IV. Կուսակցության կազմակերպական կա-	
ռուցվածքի մասին	96
V. Կուսակցության կենտրոնական կազմա-	
կերպությունների մասին	101
VI. Կուսակցության յերկրային—մարզա-	
յին—հանրապետական կազմակերպու-	
թյունների մասին	108
VII. Կուսակցության քաղաքային ու շրջա-	
նային (գյուղական ու քաղաքային)	
կազմակերպությունների մասին	112
VIII. Կուսակցության սկզբնական կազմակեր-	
պությունների մասին	115
IX. Կորմիր բանակի կուսակազմակերպու-	
թյունների մասին	119
X. Արտակուսակցական կազմակերպու-	
թյունների կուսակցական խմբերի	
մասին	121

XI. Ներկուսամկյական դեմոկրատիայի և
կուսակցական կարգապահության
մասին

XII. Կուսակցության դրամական միջոցների
մասին

122

127

Տեխն. խմբ. Տ. Խաչվանքյան,
սրբագրիչ Ա. Տ.-Մ Կըտչյան,
կոնտրոլ սրբ. Լ. Արտվյան

Գլավլիտի լիտոդը № 1055, պատվեր № 101,
տիրութ 40-000, ինգեքս Ա-46

Հանձնված և արտադրության 8 / III 1936 թ.
ստորագրված և տպագրության 22 / III 1936 թ.

Գիրք 70 կ.

Հայկական տպարան, Երևան Ալյանսի հետքան № 27



29 МАРТ 1936

225

- 32 -

4462 70 4.

4682



ПРОГРАММА И УСТАВ
ВКП(б)

Армпартиздат, Зриваань, 1936